Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) բնորոշի քիմիական տարրերի հատկանիշները՝ Պարբերական աղյուսակին համապատասխան, 2) տարբերակի անօրգանական միացությունների դասերը, կոմպլեքսային միացությունները, կազմի և

	<p>անվանակարգի բանաձևերը,</p> <p>3) տարբերակի քիմիական ռեակցիաները, կազմի հավասարումներ, կատարի հաշվարկներ քիմիական բանաձևերով և ռեակցիաների հավասարումներով,</p> <p>4) տիրապետի ֆազային հավասարակշռության, մակերևութային լարվածության, մածուցիկության, և գոլորշացման հասկացություններին, երկբաղադրատարր հեղուկ և պինդ համակարգերին:</p>
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բնորոշել քիմիական տարրերի հատկանիշները՝ Պարբերական աղյուսակին համապատասխան
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է գրում ատոմների էլեկտրոնային կոնֆիգուրացիաները հիմնական և գրգռված վիճակներում,</p> <p>2) ճիշտ է արտահայտում վալենտականությունը և օքսիդացման աստիճանը,</p> <p>3) ճիշտ է նկարագրում ատոմի կառուցվածքը և քիմիական կապերը,</p> <p>4) ճիշտ է նկարագրում P, S, D տարրերի բնության մեջ գտնվելը, ֆիզիկական, քիմիական հատկությունները և հիմնավորում դրանք՝ քիմիական ռեակցիաների միջոցով:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացման գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողին հանձնարարվելու են թեստային առաջադրանքներ ատոմի կառուցվածքի և քիմիական կապերի, P, S, D տարրերի բնության մեջ գտնվելու, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանքների միջոցով ստուգվելու են հիմնական և գրգռված վիճակներում ատոմների էլեկտրոնային կոնֆիգուրացիաները գրելու, վալենտականությունը և օքսիդացման աստիճանը արտահայտելու, քիմիական ռեակցիաների միջոցով P, S, D տարրերի ֆիզիկական և քիմիական հատկությունները հիմնավորելու ունակությունները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • ատոմների էլեկտրոնային կոնֆիգուրացիաները, կառուցվածքը և քիմիական կապերը, • վալենտականություն և օքսիդացման աստիճան, • P, S, D տարրերի բնության մեջ գտնվելը, ֆիզիկական և քիմիական հատկությունները:

	Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, պաստառներ, սխեմաներ, ատլասներ, սլայդներ, տեսաֆիլմեր, փորձերի կատարման համար անհրաժեշտ նյութեր, լաբորատոր պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Տարբերակել անօրգանական միացությունների դասերը, կոմպլեքսային միացությունները, կազմել և անվանակարգել բանաձևերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հիմքերի, թթուների, օքսիդների, հիդրօքսիդների, աղերի ֆիզիկական և քիմիական հատկությունները, 2) ճիշտ է հաստատում հիմնային, թթվային և ամֆոտեր օքսիդների հատկությունները քիմիական ռեակցիաներով, 3) ճիշտ է կազմում աղերի բանաձևերը և անվանակարգում դրանք, 4) ճիշտ է կազմում և անվանակարգում կոմպլեքսային միացությունների բանաձևերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացման գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողին տրվելու են հիմքերի, թթուների, օքսիդների, հիդրօքսիդների և աղերի ֆիզիկական, քիմիական հատկությունների վերաբերյալ թեստային առաջադրանքներ: Քիմիական ռեակցիաների միջոցով հիմնային, թթվային և ամֆոտեր օքսիդների հատկությունները հաստատելու, աղերի և կոմպլեքսային միացությունների ֆորմուլաները կազմելու և անվանակարգելու ունակությունները ստուգվելու են գործնական հանձնարարությունների միջոցով: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> • հիմքերի, թթուների, օքսիդների, հիդրօքսիդների, աղերի ֆիզիկական և քիմիական հատկությունները, • հիմնային, թթվային և ամֆոտեր օքսիդների հատկությունները, • աղերի և կոմպլեքսային միացությունների բանաձևերը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին</p>

	և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, պաստառներ, սխեմաներ, ատլասներ, սլայդներ, տեսաֆիլմեր, փորձերի կատարման համար անհրաժեշտ նյութեր, լաբորատոր պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Տարբերակել քիմիական ռեակցիաները, կազմել հավասարումներ, կատարել հաշվարկներ քիմիական բանաձևերով և ռեակցիաների հավասարումներով
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում քիմիական ռեակցիաների արագության կախվածությունը ռեակցիայի մեջ մտնող նյութի բնույթից, կոնցենտրացիայից, ջերմաստիճանից և կատալիզատորից, 2) ճիշտ է ներկայացնում քիմիական հավասարակշռությունը և դրա տեղաշարժը, 3) ճիշտ է կիրառում Լե-Շատելյեի սկզբունքը, 4) ճիշտ է կազմում օքսիդա-վերականգման ռեակցիաների հավասարումները, 5) ճիշտ է որոշում քիմիական ռեակցիաների տեսակները, 6) ճիշտ է կատարում լուծույթների դասակարգումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացման գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողին տրվելու են քիմիական ռեակցիաների տեսակների, դրանց արագության վրա ազդող նյութի բնույթի, կոնցենտրացիայի, ջերմաստիճանի և կատալիզատորի, քիմիական հավասարակշռության և դրա տեղաշարժի վերաբերյալ թեստային առաջադրանքներ: Գործնական հանձնարարությունների միջոցով ստուգվում են Լե-Շատելյեի սկզբունքի կիրառման, օքսիդա-վերականգման ռեակցիաների հավասարումներ կազմելու ունակությունները: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> • քիմիական ռեակցիաների արագության վրա ազդող գործոնները (ջերմաստիճան, կատալիզատոր և այլն), • քիմիական հավասարակշռություն,

	<ul style="list-style-type: none"> • Լե-Շատելյեի սկզբունքը, • քիմիական ռեակցիաների տեսակները, • լուծույթների դասակարգում: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, պաստառներ, սխեմաներ, աղյուսներ, սլայդներ, տեսաֆիլմեր, փորձերի կատարման համար անհրաժեշտ նյութեր, լաբորատոր պարագաներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Տիրապետել ֆազային հավասարակշռության, մակերևութային լարվածության, մածուցիկության և գոլորշացման հասկացություններին, երկբաղադրատարր հեղուկ և պինդ համակարգերին</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բնութագրում ֆազային երևույթների և հավասարակշռության հասկացությունները, 2) ճիշտ է բնութագրում միա-, երկ- և եռաբաղադրատարր համակարգերը, 3) ճիշտ է ներկայացնում մակերևութային լարվածության, մածուցիկության և գոլորշացման պայմանները, 4) ճիշտ է նկարագրում երկբաղադրատարր հեղուկ և պինդ համակարգերը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացման գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողին առաջադրվելու են թեստային առաջադրանքներ ֆազային երևույթների և հավասարակշռության հասկացությունների, մեկ-, երկ- և եռաբաղադրատարր համակարգերի, երկբաղադրատարր հեղուկ և պինդ համակարգերի վերաբերյալ: Գործնական հանձնարարությունների միջոցով ստուգվում են մակերևութային լարվածության, մածուցիկության և գոլորշացման պայմանների ներկայացման ունակությունները: Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • ֆազային երևույթներ, հավասարակշռության, • միա-, երկ- և եռաբաղադրատարր համակարգեր, երկբաղադրատարր հեղուկ և պինդ համակարգեր,

	<ul style="list-style-type: none"> մակերևութային լարվածության, մածուցիկության և գոլորշացման պայմանները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, պաստառներ, սխեմաներ, ատլասներ, սլայդներ, տեսաֆիլմեր, փորձերի կատարման համար անհրաժեշտ նյութեր, լաբորատոր պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԴԵԴ-5-19-003
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել օրգանական միացությունների դասակարգման, քիմիական ռեակցիաների միջոցով օրգանական ծագման նյութերի քիմիական հատկությունների որոշման, օրգանական նյութերը՝ ըստ իրենց ֆիզիկա-քիմիական հատկությունների ճանաչման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԴԵԴ-5-19-002 «Անօրգանական քիմիայի հիմունքներ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> դասակարգի օրգանական միացությունները, բացատրի դրանց ֆիզիկա-քիմիական հատկությունների կախվածությունը՝ կառուցվածքից, իրականացնի պարզ օրգանական միացությունների սինթեզ, քիմիական փորձերով հաստատի ստացված օրգանական նյութի իսկությունը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների

	բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Դասակարգել օրգանական միացությունները, բացատրել դրանց ֆիզիկա-քիմիական հատկությունների կախվածությունը՝ կառուցվածքից
Կատարման չափանիշներ	1) տարբերում է օրգանական միացությունների մոլեկուլների մոդելները և ճիշտ է գրում մոլեկուլյար բանաձևերը, 2) ճիշտ է անվանում օրգանական նյութերը, 3) ճիշտ է հաստատում օրգանական միացությունների կառուցվածքի և հատկությունների միջև կապը, 4) ճիշտ է գրում օրգանական միացությունների ստացման և քիմիական հատկությունների ռեակցիաների հավասարումները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացման գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողին տրվելու են թեստային առաջադրանքներ օրգանական միացությունների մոլեկուլների մոդելների և մոլեկուլյար բանաձևերի վերաբերյալ: Օրգանական միացությունների, դրանց ստացման և քիմիական հատկությունների ռեակցիաների հավասարումները գրելու ունակությունները ստուգվելու են գործնական հանձնարարությունների միջոցով: Ծրագրային մանրամասներ <ul style="list-style-type: none"> • օրգանական միացությունների մոլեկուլների մոդելները և մոլեկուլյար բանաձևերը • օրգանական միացությունների կառուցվածքի և հատկությունների միջև կապը • օրգանական միացությունների ստացումը և քիմիական հատկությունները Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, պաստառներ, սխեմաներ, ատլասներ, սլայդներ, տեսաֆիլմեր, փորձերի կատարման համար անհրաժեշտ նյութեր, լաբորատոր պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ

Ուսումնառության արդյունք 2	Իրականացնել պարզ օրգանական միացությունների սինթեզ
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է հավաքում անհրաժեշտ լաբորատոր սարքերը, ամանեղենը, նյութերը,</p> <p>2) ճիշտ է ընտրում ելանյութերը և կատալիզատորները,</p> <p>3) ճիշտ հերթականությամբ է կատարում անհրաժեշտ գործողությունները և միջավայրից անջատում նպատակային նյութը,</p> <p>4) ճիշտ է տիրապետում լաբորատոր սարքերի և նյութերի հետ աշխատանքի անվտանգության կանոններին:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացման գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողին տրվելու են թեստային առաջադրանքներ օրգանական միացությունների սինթեզի ընթացքում կիրառվող ելանյութերի, կատալիզատորների, գործողությունների հաջորդականության վերաբերյալ: Օրգանական միացությունների ստացման, նպատակային նյութի անջատման, լաբորատոր սարքերի և նյութերի հետ աշխատելու ունակությունները ստուգվելու են գործնական հանձնարարությունների միջոցով:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • օրգանական միացությունների սինթեզի ժամանակ կիրառվող ելանյութերը, կատալիզատորները, գործողությունների հերթականությունը, • լաբորատոր սարքերի, նյութերի ընտրությունը և դրանց հետ աշխատելու անվտանգության կանոնները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, պաստառներ, սխեմաներ, ատլասներ, սլայդներ, տեսաֆիլմեր, փորձերի կատարման համար անհրաժեշտ նյութեր, լաբորատոր պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Քիմիական փորձերով հաստատել ստացված օրգանական նյութի իսկությունը

Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում տվյալ միացությունը հայտնաբերող նյութը,</p> <p>2) ճիշտ է օգտվում քիմիական ռեակցիայի ընթացքի սխեմաներից,</p> <p>3) ճիշտ է գրանցում քիմիական ռեակցիայի արդյունքները,</p> <p>4) ճիշտ է ստուգում ստացված նյութի իսկությունը՝ քիմիական փորձերի միջոցով և գրում հավասարումները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացման գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողին տրվելու են թեստային առաջադրանքներ օրգանական միացությունները հայտնաբերող նյութերի, ռեակցիաների, հավասարումների վերաբերյալ: Քիմիական փորձերով օրգանական նյութերի իսկությունը որոշելու ուսանողի ունակությունները ստուգվելու են գործնական հանձնարարությունների միջոցով:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • նյութեր՝ օրգանական միացությունների հայտնաբերման համար, • ստացված օրգանական նյութի իսկության հաստատումը. ռեակցիայի ընթացքը, արդյունքները, հավասարումները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, պաստառներ, սխեմաներ, աղյուսներ, սլայդներ, տեսաֆիլմեր, փորձերի կատարման համար անհրաժեշտ նյութեր, լաբորատոր պարագաներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԱԼԻՏԻԿ ՔԻՄԻԱ»	
Մոդուլի դասիչը	ԴԵՂ-05-19-004
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել համապատասխան եղանակների կիրառմամբ քիմիական նյութերի որակական և քանակական վերլուծություն (անալիզ) իրականացնելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը	24 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԴԵՂ-5-19-003 «Օրգանական քիմիայի հիմունքներ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի որակական անալիզի եղանակները, 2) կատարի կատիոնների որակական անալիզ, 3) կատարի անիոնների որակական անալիզ, 4) կատարի քանակական անալիզ տիտրոմետրիկ եղանակով, 5) կատարի թթվա-հիմնային տիտրում ջրային լուծույթներում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել որակական անալիզի եղանակները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է տարբերակում որակական անալիզի եղանակները, 2) ճիշտ է բնութագրում որակական անալիզում օգտագործվող եղանակները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացման գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողին կառաջադրվի բնութագրել որակական անալիզ կատարելիս օգտագործվող ռեակցիաները, եղանակները: Քիմիական փորձերով որակական անալիզ կատարելու ունակությունները ստուգվելու են գործնական հանձնարարությունների միջոցով:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • որակական անալիզի եղանակները, • որակական անալիզում օգտագործվող եղանակների բնութագրերը: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին և ճիշտ է</p>

		կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը ռեսուրսները	և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, պաստառներ, գունավոր սլայդներ, նյութեր, ռեակտիվներ, լաբորատոր սպասք, թերմոստատ, սպիրտայրոց, հաշվարկային, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման ժամաքանակը	երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 2		Կատարել կատիոնների որակական անալիզ
Կատարման չափանիշներ		1) ճիշտ է կատարում կատիոնների հայտնաբերման որակական ռեակցիաները՝ օգտագործելով համապատասխան ազդանյութեր, 2) ճիշտ է կատարում կատիոնների խառնուրդի որակական անալիզը՝ օգտագործելով համապատասխան խմբային ազդանյութեր:
Գնահատման միջոցը		Արդյունքի յուրացման գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողին կառաջադրվի բնութագրել կատիոնների հայտնաբերման և կատիոնների խառնուրդի որակական անալիզի ռեակցիաները: Քիմիական փորձերով կատիոնների հայտնաբերման և կատիոնների խառնուրդի որակական անալիզ կատարելու ուսանողի ունակությունները ստուգվելու են գործնական հանձնարարությունների միջոցով: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> • կատիոնների հայտնաբերման որակական ռեակցիաները, • կատիոնների խառնուրդի որակական անալիզը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը ռեսուրսները	և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, պաստառներ, գունավոր սլայդներ, նյութեր, ռեակտիվներ, լաբորատոր սպասք, թերմոստատ, սպիրտայրոց, հաշվարկային, իրավիճակային խնդիրներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կատարել անիոնների որակական անալիզ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում անիոնների հայտնաբերման որակական ռեակցիաները՝ օգտագործելով համապատասխան ազդանյութեր, 2) ճիշտ է կատարում անիոնների խառնուրդի որակական անալիզը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացման գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողին կառաջադրվի բնութագրել անիոնների հայտնաբերման և անիոնների խառնուրդի որակական անալիզի ռեակցիաները: Քիմիական փորձերով անիոնների հայտնաբերման և անիոնների խառնուրդի որակական անալիզ կատարելու ուսանողի ունակությունները ստուգվելու են գործնական հանձնարարությունների միջոցով: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> • անիոնների հայտնաբերման որակական ռեակցիաները, • անիոնների խառնուրդի որակական անալիզը: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը ռեսուրսները	և Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, պաստառներ, գունավոր սլայդներ, նյութեր, ռեակտիվներ, լաբորատոր սպասք, թերմոստատ, սպիրտայրոց, հաշվարկային, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կատարել քանակական անալիզ տիտրոմետրիկ եղանակով
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բնութագրում տիտր և տիտրվող լուծույթ, էկվիվալենտ հասկացությունները, 2) ճիշտ է որոշում աշխատանքային լուծույթների ծավալը, կշիռը և տիտրը՝ օգտագործելով համապատասխան բանաձևեր:

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացման գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողին կառաջադրվի բնութագրել տիտր և տիտրվող լուծույթ, էկվիվալենտ հասկացությունները: Տիտրոմետրիկ եղանակով քանակական անալիզ կատարելու ուսանողի ունակությունները ստուգվելու են գործնական հանձնարարությունների միջոցով:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • տիտրոմետրիկ եղանակ, տիտր, տիտրվող լուծույթ, էկվիվալենտ, • աշխատանքային լուծույթների ծավալի, կշռի և տիտրի հաշվարկը: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, պաստառներ, գունավոր սլայդներ, նյութեր, ռեակտիվներ, լաբորատոր սպասք, թերմոստատ, սպիրտայրոց, հաշվարկային, իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Կատարել թթվա-հիմնային տիտրում ջրային լուծույթներում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է պատրաստում ստանդարտ լուծույթներ, 2) ճիշտ է որոշում աշխատանքային լուծույթի կոնցենտրացիան՝ ստանդարտ լուծույթի օգնությամբ, 3) ճիշտ է ընտրում համապատասխան հայտանյութ (ինդիկատոր), 4) ճիշտ է որոշում թթվային և հիմնային բնույթի նյութերի զանգվածային բաժինները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացման գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողին կառաջադրվի որոշել աշխատանքային լուծույթի կոնցենտրացիան, ընտրել համապատասխան հայտանյութը (ինդիկատորը): Ստանդարտ լուծույթներ պատրաստելու, թթվա-հիմնային տիտրում կատարելու ուսանողի ունակությունները ստուգվելու են գործնական հանձնարարությունների միջոցով:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p>

	<ul style="list-style-type: none"> • ստանդարտ լուծույթներ, • աշխատանքային լուծույթի կոնցենտրացիան, հայտանյութը՝ թթվա-հիմնային տիտրում կատարելիս: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում բոլոր հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, պաստառներ, գունավոր սլայդներ, նյութեր, ռեակտիվներ, լաբորատոր սպասք, թերմոստատ, սպիրտայրոց, հաշվարկային, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻԶԻՈԼՈԳԻԱ ԱՆԱՏՈՄԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ»	
Մոդուլի դասիչը	ԴԵՂ-05-19-005
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել բջիջների, հյուսվածքների, հիմնական օրգան- համակարգերի գործունեության, անատոմիական կառուցվածքի և մարդու օրգանիզմի կենսագործունեության վերաբերյալ ճանաչման, տարբերակման գիտելիքներ և կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 32 ժամ գործնական աշխատանք՝ 40 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԴԵՂ-5-15-001 «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական եվ դեղագործական տերմինաբանությամբ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ճանաչի բջջի կառուցվածքային և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները , 2) տարբերակի հյուսվածքների տեսակները և ներկայացնի առանձնահատկությունները, 3) ճանաչի արյան բաղադրությունը, տարբերակի ձևավոր տարրերը և պլազման, ներկայացնի արյան գործառույթները,

	<p>4) ներկայացնի մարդու հենաշարժիչ համակարգի կառուցվածքը և գործունեությունը,</p> <p>5) ներկայացնի մարդու սիրտ-անոթային և լիմֆատիկ համակարգերի կառուցվածքը և գործունեությունը,</p> <p>6) ներկայացնի մարդու նյարդային համակարգի, զգայական օրգանների կառուցվածքը և գործունեությունը,</p> <p>7) ներկայացնի մարդու մարսողական համակարգի կառուցվածքը և գործունեությունը,</p> <p>8) ներկայացնի շնչառական համակարգի կառուցվածքը և գործունեությունը,</p> <p>9) ներկայացնի մարդու միասեռական համակարգի կառուցվածքը և գործունեությունը,</p> <p>10) ներկայացնի մարդու ներզատիչ համակարգի կառուցվածքը և գործունեությունը:</p>
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
Ուսումնառության արդյունք 1	Ճանաչել բջջի կառուցվածքային և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է տարբերակում բջջաթաղանթի, ցիտոպլազմայի, բջջակորիզի կառուցվածքը և գործառույթները,</p> <p>2) ճիշտ է տարբերակում օրգանոիդների և ներառուկների տեսակները և ներկայացնում գործառույթները,</p> <p>3) ճիշտ է բացատրում և ներկայացնում բջջի բազմացման եղանակները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ բջջի հիմնական կառուցվածքային բաղադրամասերի, հատկությունների և գործառույթների վերաբերյալ: Գործնական առաջադրանքը կատարելիս ուսանողը մանրադիտակային պրեպարատների վրա պետք է ցուցադրի բջջի կառուցվածքային բաղադրամասերը: Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> բջջի կառուցվածքային առանձնահատկությունները և բազմացման եղանակները, օրգանոիդների, ներառուկների տեսակները և գործառույթները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը ռեսուրսները	և Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարամունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պաստառներ, մանրադիտակներ և մանրադիտակային պրեպարատներ, մեթոդական և

	տեղեկատու գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Տարբերակել հյուսվածքների տեսակները և ներկայացնել առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է տարբերակում և ներկայացնում էպիթելային հյուսվածքի տեսակները, տեղակայումը և գործառույթները, 2) ճիշտ է ներկայացնում և տարբերակում շարակցական հյուսվածքի տեսակները և գործառույթները, 3) ճիշտ է տարբերակում և ներկայացնում մկանային հյուսվածքի տեսակները և գործառույթները, 4) ճիշտ է տարբերակում և ներկայացնում նյարդային հյուսվածքի կառուցվածքը, առանձնահատկությունները և գործառույթները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ հյուսվածքների դասակարգման, կառուցվածքի, գործառույթների և առանձնահատկությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանքը կատարելիս ուսանողը պետք է տարբերակի հյուսվածքների տեսակները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • հյուսվածքների տեսակները, • հյուսվածքների առանձնահատկությունները և գործառույթները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պաստառներ, մանրադիտակներ և մանրադիտակային պրեպարատներ, մեթոդական և տեղեկատու գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ճանաչել արյան բաղադրությունը, տարբերակել ձևավոր տարրերը և պլազման, ներկայացնել արյան

	գործառույթները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում արյան բաղադրությունը, 2) ճիշտ է տարբերակում արյան ձևավոր տարրերը և պլազման, 3) ճիշտ է տարբերակում արյան խմբերը և բացատրում դրանց գործառույթները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ արյան կազմի, խմբերի, ֆիզիկա-քիմիական հատկությունների, ռեզուս-գործոնի վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը դիտողական պարագաների վրա պետք է ցուցադրի արյան կառուցվածքը, որոշի էրիթրոցիտների նստեցման արագությունը (ԷՆԱ) և արյան խմբերը:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • արյան բաղադրությունը, գործառույթները, խմբերը, • արյան ձևավոր տարրերը և պլազման: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պաստառներ, մանրադիտակ և արյան պրեպարատներ, արյան ստանդարտ շիճուկներ՝ արյան խմբերի որոշման համար, Պանչենկովի ապարատ, Սալիի հեմոմետր, մեթոդական և տեղեկատու գրականություն:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել մարդու հենաշարժիչ համակարգի կառուցվածքը և գործունեությունը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մարդու հենաշարժիչ համակարգի կառուցվածքը և գործունեությունը, 2) ճիշտ է ներկայացնում կմախքի կառուցվածքը և գործունեությունը 3) ճիշտ է ներկայացնում կմախքային մկանները,

	4) ճիշտ է տարբերակում ոսկրերի տեսակները, դրանց միացման ձևերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ հենաշարժիչ համակարգի կառուցվածքի, կմախքի, կմախքային մկանների, ոսկրերի վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը կմախքի, առանձին ոսկրերի վրա պետք է ցուցադրի ոսկրերի կառուցվածքը, միացումները: Ծրագրային մանրամասներ; <ul style="list-style-type: none"> • մարդու հենաշարժիչ համակարգի կառուցվածքը, • կմախքային մկանները, ոսկրերը, դրանց միացման ձևերը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, գունավոր ատլասներ, կմախք, առանձին ոսկրեր, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել մարդու սիրտ-անոթային և լիմֆատիկ համակարգերի կառուցվածքը և գործունեությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մարդու սիրտ-անոթային համակարգի կառուցվածքը և գործունեությունը, 2) ճիշտ է ներկայացնում սրտի կառուցվածքը և դրա գործառնական բնութագիրը, 3) ճիշտ է ներկայացնում արյան շրջանառության ֆիզիոլոգիան, 4) ճիշտ է տարբերակում արյան անոթների տեսակները, 5) ճիշտ է բնութագրում լիմֆատիկ համակարգի կառուցվածքը և գործառույթները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ սիրտ-անոթային համակարգի, լիմֆատիկ համակարգի կառուցվածքի և գործունեության վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս

	<p>ուսանողը դիտողական պարագաների վրա պետք է ցուցադրի սիրտ-անոթային համակարգի կառուցվածքը: Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • սիրտ-անոթային համակարգի կառուցվածքը և գործունեությունը, • արյան անոթների տեսակները, արյան շրջանառության ֆիզիոլոգիան, • լիմֆատիկ համակարգի կառուցվածքը և գործառույթները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, մոդելներ, մուլյաժներ, ուսումնական տեսանյութեր, գունավոր ատլասներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 6</p>	<p>Ներկայացնել մարդու նյարդային համակարգի, զգայական օրգանների կառուցվածքը և գործունեությունը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է դասակարգում մարդու նյարդային համակարգը, 2) ճիշտ է ներկայացնում մարդու կենտրոնական նյարդային համակարգի կառուցվածքը և գործունեությունը, 3) ճիշտ է ներկայացնում գլխուղեղի կառուցվածքը և գործունեությունը, 4) ճիշտ է ներկայացնում ողնուղեղի կառուցվածքը և գործունեությունը, 5) ճիշտ է ներկայացնում մարդու ծայրամասային նյարդային համակարգը, 6) ճիշտ է ներկայացնում մարդու վեգետատիվ նյարդային համակարգի կառուցվածքը և գործունեությունը, 7) ճիշտ է ներկայացնում մարդու զգայական օրգանների կառուցվածքը և գործունեությանը:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ մարդու նյարդային համակարգի և զգայական օրգանների կառուցվածքի և գործունեության վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը դիտողական պարագաների վրա պետք է ցուցադրի նյարդային համակարգի բաժինները, տեղադրությունը:</p>

	<p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> մարդու նյարդային համակարգի կառուցվածքը և գործունեությունը, զգայական օրգանների կառուցվածքը և գործունեությունը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, մոդելներ, մուլյաժներ, ուսումնական տեսանյութեր, գծապատկերներ, գունավոր ատլասներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 7</p>	<p>Ներկայացնել մարդու մարսողական համակարգի կառուցվածքը և գործունեությունը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում բերանի խոռոչի, կերակրափողի կառուցվածքը և գործունեությունը, 2) ճիշտ է ներկայացնում ստամոքսի կառուցվածքը և գործունեությունը, 3) ճիշտ է ներկայացնում աղիների կառուցվածքը և գործունեությունը, 4) ճիշտ է ներկայացնում մարսողության գործընթացը:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ մարսողական համակարգի կառուցվածքի և գործունեության վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը դիտողական պարագաների վրա պետք է ցուցադրի մարսողական համակարգի բաժինները, տեղադրությունը:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> մարդու մարսողական համակարգի կառուցվածքը և գործունեությունը, մարսողության գործընթացը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>

Մեթոդաբանությունը ռեսուրսները	և Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, մոդելներ, մուլյաժներ, ուսումնական տեսանյութեր, գծապատկերներ, գունավոր ատլասներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել շնչառական համակարգի կառուցվածքը և գործունեությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում քթի խոռոչի, ըմպանի կառուցվածքը և գործունեությունը, 2) ճիշտ է ներկայացնում շնչափողի, բրոնխների կառուցվածքը և գործունեությունը, 3) ճիշտ է ներկայացնում թոքերի կառուցվածքը և գործունեությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ շնչառական համակարգի կառուցվածքի և գործունեության վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը դիտողական պարապմունքների վրա պետք է ցուցադրի շնչառական համակարգի օրգանները և տեղադրությունը: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> • շնչառական համակարգի կառուցվածքը, • շնչառական համակարգի բաժինները և դրանց գործունեությունը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը ռեսուրսները	և Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, մոդելներ, մուլյաժներ, ուսումնական տեսանյութեր, գծապատկերներ, գունավոր ատլասներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 9	Ներկայացնել մարդու միզասեռական համակարգի գործունեությունը և կառուցվածքը

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում երիկամների կառուցվածքը և գործունեությունը, 2) ճիշտ է ներկայացնում միզաձորանի և միզապարկի կառուցվածքը և գործունեությունը, 3) ճիշտ է ներկայացնում մեզի առաջացման մեխանիզմները, 4) ճիշտ է ներկայացնում կանացի ներքին և արտաքին սեռական օրգանների կառուցվածքը և գործունեությունը, 5) ճիշտ է ներկայացնում տղամարդու ներքին և արտաքին սեռական օրգանների կառուցվածքը և գործունեությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ միզասեռական համակարգի կառուցվածքի և գործունեության վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը դիտողական պարագաների վրա պետք է ցուցադրի երիկամների, միզաձորանի, միզապարկի, սեռական օրգանների կառուցվածքը և գործունեությունը:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • երիկամների, միզաձորանի, միզապարկի կառուցվածքը և գործունեությունը, • ներքին և արտաքին սեռական օրգանների կառուցվածքը և գործունեությունը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, մոդելներ, մուլյաժներ, ուսումնական տեսանյութեր, գծապատկերներ, գունավոր ատլասներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 10	<p>Ներկայացնել մարդու ներզատիչ համակարգի կառուցվածքը և գործունեությունը</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ներզատիչ համակարգի գեղձերի տեսակները և դրանց գործունեությունը, 2) ճիշտ է ներկայացնում հորմոնների տեսակները և դրանց ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների</p>

	<p>կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ ներգատիչ համակարգի կառուցվածքի և գործունեության վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը դիտողական պարագաների վրա պետք է ցուցադրի ներգատիչ գեղծերը և տեղադրությունը:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • ներգատիչ համակարգի կառուցվածքը, • հորմոնների տեսակները, դրանց դերը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, մոդելներ, մուլյաժներ, ուսումնական տեսանյութեր, գծապատկերներ, գունավոր ատլասներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</p>	
<p>Մոդուլի դասիչը</p>	<p>ԴԵՂ-05-19-006</p>
<p>Մոդուլի նպատակը</p>	<p>Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել բուսական բջիջների, հյուսվածքների, բույսերի տարբեր օրգանների անատոմիական, մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ, ինչպես նաև մանրադիտակով աշխատելու, ֆիտոցենոզներում բույսերի տեսակները որոշելու, ձևաբանական նկարագիր կազմելու կարողություններ:</p>
<p>Մոդուլի տևողությունը</p>	<p>54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 22 ժամ գործնական աշխատանք՝ 32 ժամ</p>
<p>Մուտքային պահանջները</p>	<p>Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԴԵՂ-5-19-001 «Լատիներեն լեզվի հիմունքներ՝ բժշկական և դեղագործական տերմինաբանությամբ» մոդուլը:</p>

<p>Ուսումնառության արդյունքները</p>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի բուսական բջիջների, հյուսվածքների, բույսերի տարբեր օրգանների անատոմիական, մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, 2) ներկայացնի բուսական բջիջների, հյուսվածքների, բույսերի տարբեր օրգանների հիմնական գործառույթները և բույսի կենսագործունեությունը, 3) տարբերակի տարբեր ֆիտոցենոզներում բույսերի տեսակները, 4) օգտվի մանրադիտակից և տա բույսի ձևաբանական նկարագիրը՝ ըստ հերբարիումի:
<p>Մոդուլի գնահատման կարգը</p>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<p>Ուսումնառության արդյունք 1</p>	<p>Ներկայացնել բուսական բջիջների, հյուսվածքների, բույսերի տարբեր օրգանների անատոմիական, մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները</p>
	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում բուսական բջջի կառուցվածքը, քիմիական կազմը, հիմնական տարրերը, 2) ճիշտ է ներկայացնում և բնութագրում հյուսվածքների հիմնական տիպերը, 3) ճիշտ է բնութագրում բույսերի օրգանների անատոմիական առանձնահատկությունները, 4) ճիշտ է ներկայացնում բույսերի մորֆոլոգիական առանձնահատկությունները, 5) ճիշտ է բնութագրում բույսերի վեգետատիվ օրգանների մորֆոլոգիական առանձնահատկությունները, 6) ճիշտ է ներկայացնում բույսերի գեներատիվ օրգանները, դրանց կառուցվածքը, 7) ճիշտ է նկարագրում բույսերի բազմացման ձևերը, դրանց առանձնահատկությունները:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում են ուսանողի գիտելիքները բուսական բջիջների, հյուսվածքների, բույսերի տարբեր օրգանների, բազմացման ձևերի վերաբերյալ: Գործնական առաջադրանքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա դիտողական պարագաների վրա տարբերակել բջջի կառուցվածքային տարրերը, հյուսվածքները, օրգան համակարգերը:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p>

	<ul style="list-style-type: none"> • բուսական բջիջների, հյուսվածքների կառուցվածքը, • բույսերի տարբեր օրգանների անատոմիական, մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, • բույսերի բազմացման ձևերը: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, մանրադիտակներ, դիդակտիկ նյութեր, փորձարարական աշխատանքների համար անհրաժեշտ քիմիական նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել բուսական բջիջների, հյուսվածքների, բույսերի տարբեր օրգանների հիմնական գործառույթները և բույսի կենսագործունեությունը</p>
	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում բուսական բջջի հիմնական գործառույթները, 2) ճիշտ է ներկայացնում բուսական հյուսվածքների հիմնական գործառույթները և դրանց դերը բուսական օրգանիզմում, 3) ճիշտ է ներկայացնում բույսի տարբեր օրգանների հիմնական գործառույթները և դրանց դերը բուսական օրգանիզմում, 4) ճիշտ է բնութագրում բույսերի կենսագործունեությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում են ուսանողի գիտելիքները բուսական բջիջների, հյուսվածքների, բույսերի տարբեր օրգանների գործառույթների վերաբերյալ: Գործնական առաջադրանքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա ներկայացնել բույսերի կենսագործունեության առանձնահատկությունները: Ծրագրային մանրամասներ.</p>

	<ul style="list-style-type: none"> բուսական բջիջների, հյուսվածքների, բույսերի տարբեր օրգանների գործառույթները, բույսի կենսագործունեությունը: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, մանրադիտակներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Տարբերակել տարբեր ֆիտոցենոզներում բույսերի տեսակները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> ճիշտ է դասակարգում բույսերը ըստ դասերի, ընտանիքների, կարգերի, տեսակների, ճիշտ է ներկայացնում բույսերի ընտանիքները և բնութագրում դրանց առանձնահատկությունները, ճիշտ է տարբերակում բույսերը՝ ըստ ընտանիքների:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվում են ուսանողի գիտելիքները բույսերի դասակարգման, տարբեր ընտանիքների առանձնահատկությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա տարբերակել բույսերը՝ ըստ ընտանիքների:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> բույսերի դասակարգումը, բույսերի ընտանիքները և դրանց առանձնահատկությունները: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, դիդակտիկ նյութեր, բույսերի հերբարիումներ, սլայդներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու

	գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Օգտվել մանրադիտակից և տալ բույսի ձևաբանական նկարագիրը՝ ըստ հերբարիումի
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է օգտվում մանրադիտակից՝ բույսերի հյուսվածաբանական և այլ ուսումնասիրություններ իրականացնելիս, 2) բույսերից ճիշտ է պատրաստում հերբարիումներ 3) ճիշտ է կազմում բույսերի ձևաբանական նկարագիրը՝ ըստ հերբարիումների:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ուսանողը պետք է կարողանա կազմել բույսի ձևաբանական նկարագիրը՝ ըստ հերբարիումի: Գործնական առաջադրանքների ժամանակ ուսանողը պետք է կարողանա ճիշտ օգտվել մանրադիտակից և ճիշտ պատրաստի հերբարիում: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> մանրադիտակից օգտվելու, բույսերից հերբարիում պատրաստելու կանոնները, բույսերի ձևաբանական նկարագիրը՝ ըստ հերբարիումների: Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, դիդակտիկ նյութեր, մանրադիտակ, բույսերի հերբարիումներ, սլայդներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԴԵՂ-05-19-007
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել դեղերի դեղաբանական խմբերի, դրանց ազդեցության, ներմուծման

	ուղիների, հոմանիշային փոխարինման վերաբերյալ գիտելիքներ, ինչպես նաև դեղատոմսի դուրս գրման կանոններին տիրապետելու և պաշտոնական տեղեկատու աղբյուրներից, դեղի ներդիր-թերթիկից օգտվելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական աշխատանք՝ 34 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԴԵՂ-5-19-005 «Ֆիզիոլոգիա անատոմիայի հիմունքներով», ԴԵՂ-5-19-012 «Ֆարմակոգնոզիա», ԴԵՂ-5-19-011 «Դեղագործական քիմիա», ԴԵՂ-5-19-014 «Դեղերի գործարանային տեխնոլոգիա» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1) ճանաչի դեղաբանության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները և դեղաբանական խմբերը, 2) ներկայացնի դեղերի դեղաբանական ազդեցությունը՝ ըստ ֆարմակոդինամիկական և ֆարմակոկինետիկական հատկանիշների, 3) ներկայացնի դեղերի ներմուծման ուղիները և դեղաձևերը, 4) կատարի դեղերի հոմանիշային փոխարինում, 5) տարբերակի ճիշտ և սխալ ձևակերպված դեղատոմսերը, 6) օգտվի դեղերի վերաբերյալ պաշտոնական տեղեկատու աղբյուրներից և դեղի ներդիր-թերթիկից:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
Ուսումնառության արդյունք 1	Ճանաչել դեղաբանության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները և դեղաբանական խմբերը
	1) ճիշտ է ներկայացնում «դեղ», «դեղաչափ», «դեղաձև» և այլ հասկացությունները, 2) ճիշտ է դասակարգում դեղերը ըստ դեղաբանական խմբերի և ենթախմբերի:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ դեղաբանության մեջ օգտագործվող

	<p>«դեղ», «դեղաչափ», «դեղաձև» և այլ հասկացությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են տարբեր դեղերի դասակարգման ունակությունները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • դեղաբանության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները, • դեղերի դասակարգումը՝ ըստ դեղաբանական խմբերի և ենթախմբերի: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սխեմաներ, սլայդներ, տեսաֆիլմեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել դեղերի դեղաբանական ազդեցությունը՝ ըստ ֆարմակոդինամիկական և ֆարմակոկինետիկական հատկանիշների</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում «ֆարմակոդինամիկա» հասկացությունը, 2) ճիշտ է ներկայացնում դեղերի ազդեցության տեսակները, 3) ճիշտ է ներկայացնում դեղերի ազդեցության մեխանիզմները, 4) ճիշտ է ներկայացնում «ֆարմակոկինետիկա» հասկացությունը, 5) ճիշտ է ներկայացնում դեղերի ներծծումը, 6) ճիշտ է ներկայացնում դեղերի տեղաբաշխումը, 7) ճիշտ է ներկայացնում դեղերի կենսամատչելիությունը, 8) ճիշտ է ներկայացնում դեղերի մետաբոլիզմը, 9) ճիշտ է ներկայացնում դեղերի արտազատումը, 10) ճիշտ է ներկայացնում և բնութագրում դեղերի կողմնակի ազդեցությունները:

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ դեղերի ազդեցության տեսակների, մեխանիզմների, կողմնակի ազդեցությունների, «ֆարմակոդինամիկա», «ֆարմակոկինետիկա» հասկացությունների վերաբերյալ: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են տարբեր դեղերի հատկությունները (ներծծման, կենսամատչելիության, մետաբոլիզմի և այլ) ներկայացնելու և համեմատելու ունակությունները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • «ֆարմակոդինամիկա», «ֆարմակոկինետիկա» հասկացությունները և դեղերի դեղաբանական ազդեցությունը՝ ըստ այդ հատկանիշների, • դեղերի ազդեցության տեսակները և մեխանիզմները, • դեղերի կողմնակի ազդեցությունները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սխեմաներ, սլայդներ, տեսաֆիլմեր, դեղերի ներդիր-թերթիկներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ներկայացնել դեղերի ներմուծման ուղիները և դեղաձևերը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է տարբերակում և բնութագրում դեղերի մարսողական ներմուծման ուղիները, 2) ճիշտ է տարբերակում և բնութագրում դեղերի հարմարսողական ներմուծման ուղիները, 3) ճիշտ է տարբերակում պինդ, հեղուկ, փափուկ դեղաձևերը:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ դեղերի մարսողական, հարմարսողական ներմուծման ուղիների վերաբերյալ: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են</p>

	<p>դեղաձևերի դասակարգման և տարբերակման ունակությունները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • դեղերի ներմուծման ուղիները, • դեղաձևերի տեսակները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը ռեսուրսները	և Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սխեմաներ, սլայդներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կատարել դեղերի հոմանիշային փոխարինում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ճանաչում դեղերի միջազգային չպատենտավորված անվանումները, 2) ճիշտ է տարբերակում դեղերի առևտրային անվանումները, 3) ճիշտ է կատարում հոմանիշային փոխարինում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ դեղերի անվանումների վերաբերյալ:</p> <p>Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են դեղերի հոմանիշային փոխարինման ունակությունները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • դեղերի անվանումները, • դեղերի հոմանիշային փոխարինում: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը	և Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ

ռեսուրսները	մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սխեմաներ, սլայդներ, տեսաֆիլմեր, դեղերի ներդիր-թերթիկներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Տարբերակել ճիշտ և սխալ ձևակերպված դեղատոմսերը
	1) ճիշտ է ներկայացնում դեղատոմսի կառուցվածքը և ձևակերպման կանոնները, 2) ճիշտ է բացատրում դեղատոմսում առկա կրճատումները, 3) ճիշտ է տարբերակում ճիշտ և սխալ ձևակերպված դեղատոմսերը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ դեղատոմսի կառուցվածքի, ձևակերպման կանոնների, կրճատումների վերաբերյալ: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են ճիշտ և սխալ ձևակերպված դեղատոմսերի տարբերակման ունակությունները: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> դեղատոմսի կառուցվածքը և ձևակերպման կանոնները, ճիշտ և սխալ ձևակերպված դեղատոմսերի տարբերակումը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, ճիշտ և սխալ դեղատոմսերի օրինակներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Օգտվել դեղերի վերաբերյալ պաշտոնական տեղեկատու աղբյուրներից և դեղի ներդիր-թերթիկից
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է օգտվում դեղերի վերաբերյալ պաշտոնական տեղեկատու աղբյուրներից (պաշտոնական կայքեր,

	<p>գրականություն և այլն),</p> <p>2) ճիշտ է ներկայացնում դեղի ներդիր-թերթիկի բովանդակությունը,</p> <p>3) ճիշտ է օգտվում դեղի ներդիր-թերթիկից:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ դեղերի մասին տեղեկատվություն հաղորդող պաշտոնական աղբյուրների վերաբերյալ: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են դեղերի վերաբերյալ պաշտոնական տեղեկատու աղբյուրներից և ներդիր-թերթիկից օգտվելու ունակությունները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • դեղերի վերաբերյալ պաշտոնական տեղեկատու աղբյուրները, • դեղի ներդիր-թերթիկի բովանդակությունը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, դեղերի վերաբերյալ տեղեկատու աղբյուրներ և դեղի ներդիր-թերթիկեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԴԵՂ-05-19-008
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել միկրոօրգանիզմների դասակարգման, մարդու կյանքում դրանց դերի, վարակների տարածման կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ և կարողություններ:</p>
Մոդուլի տևողությունը	<p>36 ժամ, որից՝</p> <p>Տեսական ուսուցում՝ 12 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 24 ժամ</p>

Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԴԵՂ-5-19-005 «Ֆիզիոլոգիա անատոմիայի հիմունքներով» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) դասակարգի միկրոօրգանիզմները և ներկայացնի դրանց դերը մարդու կյանքում, 2) ներկայացնի միկրոօրգանիզմների մորֆոլոգիան և ֆիզիոլոգիան, 3) տիրապետի վարակների տարածման կանխարգելման սկզբունքներին, 4) կատարի ապանեխում, հականեխում, մանրէազերծում դեղատնային պայմաններում, 5) իրականացնի մանրէների կուլտուրաների աճեցում և տարբերակում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Դասակարգել միկրոօրգանիզմները և ներկայացնել դրանց դերը մարդու կյանքում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում միկրոօրգանիզմների դերը մարդու կյանքում, 2) ճիշտ է դասակարգում միկրոօրգանիզմները, 3) ճիշտ է դասակարգում մանրէները՝ ըստ ախտածնության, ձևաբանության, շնչառության և սնվելու տեսակների, 4) ճիշտ է դասակարգում վիրուսները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ մանրէների և վիրուսների դասակարգման վերաբերյալ: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են միկրոօրգանիզմների տարբերակման և դրանց դերը մարդու կյանքում ներկայացնելու ունակությունները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • միկրոօրգանիզմների դասակարգումը, • միկրոօրգանիզմների դերը մարդու կյանքում: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>

Մեթոդաբանությունը ռեսուրսները	և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման ժամաքանակը	երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2		Ներկայացնել միկրոորգանիզմների մորֆոլոգիան և ֆիզիոլոգիան
Կատարման չափանիշներ		1) ճիշտ է ներկայացնում միկրոորգանիզմների մորֆոլոգիական առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում միկրոորգանիզմների ֆիզիոլոգիան:
Գնահատման միջոցը		Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ միկրոորգանիզմների ֆիզիոլոգիայի վերաբերյալ: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են միկրոորգանիզմների մորֆոլոգիական առանձնահատկությունները տարբերակելու ունակությունները: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> • միկրոորգանիզմների մորֆոլոգիան, • միկրոորգանիզմների ֆիզիոլոգիան: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը ռեսուրսները	և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման ժամաքանակը	երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3		Տիրապետել վարակների տարածման կանխարգելման սկզբունքներին
Կատարման չափանիշներ		1) ճիշտ է ներկայացնում հիվանդությունների վարակաբանության հիմունքները, 2) ճիշտ է տարբերակում վարակի եղանակները, 3) ճիշտ է բնութագրում միկրոորգանիզմների տեղակայումը մարդու օրգանիզմում,

	4) ճիշտ է տիրապետում վարակների տարածման կանխարգելման սկզբունքներին:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ հիվանդությունների վարակաբանության, վարակի եղանակների վերաբերյալ: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են վարակների տարածման կանխարգելման ունակությունները: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> • հիվանդությունների վարակաբանության հիմունքները, • վարակների տարածման կանխարգելման սկզբունքները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կատարել ապանեխում, հականեխում, մանրէազերծում դեղատնային պայմաններում
Կատարման չափանիշներ	1) պատրաստում է վարակազերծող լուծույթ, իրականացնում է աշխատատեղի, ձեռքերի, ամանեղենի, օժանդակ նյութերի մանրէազերծում, 2) ճիշտ է ներկայացնում մանրէազերծման եղանակները և սարքերը, 3) ճիշտ է ներկայացնում դեղերի և դեղաբուսական հումքի աղտոտման աղբյուրները, 4) ճիշտ է տարբերակում դեղատանն իրականացվող մանրէաբանական հսկողության մեթոդները՝ ախտածին մանրէների հայտնաբերման նպատակով 5) ճիշտ է վերլուծում մանրէաբանական հսկողության արդյունքները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ դեղերի և դեղաբուսական հումքի

	<p>աղտոտման աղբյուրների, մանրէազերծման եղանակների, մանրէաբանական հսկողության մեթոդների վերաբերյալ: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են վարակազերծող լուծույթ պատրաստելու, աշխատատեղի, ձեռքերի, ամանեղենի, օժանդակ նյութերի մանրէազերծման ունակությունները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • մանրէազերծման եղանակները և սարքերը, • դեղատանն իրականացվող մանրէաբանական հսկողության եղանակները և արդյունքների վերլուծությունը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, վարակազերծող նյութեր, ամանեղեն:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 5</p>	<p>Իրականացնել մանրէների կուլտուրաների աճեցում և տարբերակում</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) աճեցնում է մանրէների կուլտուրաներ, 2) ճիշտ է տարբերակում մանրէների տեսակները՝ մանրադիտակի օգնությամբ:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ հիվանդությունների վարակաբանության, վարակի եղանակների վերաբերյալ: Գործնական առաջադրանքի միջոցով ստուգվում են վարակների տարածման կանխարգելման ունակությունները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • մանրէների կուլտուրաների աճեցումը, • մանրադիտակի օգնությամբ մանրէների տարբերակումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, մանրադիտակ, մանրէների կուլտուրաներ, միջավայր, մանրէաբանական լաբորատորիայի սարքավորումներ (Պետրիի թասեր, թերմոստատ և այլն):
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԱ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱ»	
Մոդուլի դասիչը	ԴԵՂ-05-19-009
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել սննդի հիգիենայի, արտաքին միջավայրի և դեղագործական կազմակերպության միկրոկլիմայի կողմից մարդու առողջության և կենսագործունեության վրա ազդող գործոնների վերաբերյալ գիտելիքներ, ինչպես նաև մասնագիտական հիվանդությունների կանխարգելման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 16 ժամ գործնական աշխատանք՝ 20 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԴԵՂ-05-19-008 «Մանրէաբանության հիմունքներ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1) տիրապետի սննդի հիգիենայի հիմնական սկզբունքներին, 2) ներկայացնի արտաքին և ներքին միջավայրերի վնասակար գործոնների ազդեցությունը մարդու առողջության և կենսագործունեության վրա, 3) տա դեղագործական կազմակերպության միկրոկլիմայի (լուսավորության, խոնավության, ջերմաստիճանի, օդափոխության և այլնի) համալիր հիգիենիկ գնահատականը, 4) կանխարգելի մասնագիտական հիվանդությունների առաջացումը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների

	բավարար մակարդակի ապահովումն է
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետել սննդի հիգիենայի հիմնական սկզբունքներին
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում սպիտակուցները և դրանց հիգիենիկ նշանակությունը, 2) ճիշտ է ներկայացնում ճարպերը և դրանց հիգիենիկ նշանակությունը, 3) ճիշտ է ներկայացնում ածխաջրերը և դրանց հիգիենիկ նշանակությունը, 4) ճիշտ է ներկայացնում վիտամինները և դրանց հիգիենիկ նշանակությունը, 5) ճիշտ է ներկայացնում հանքային տարրերը և դրանց հիգիենիկ նշանակությունը, 6) ճիշտ է ներկայացնում սննդի բաղադրատարրերի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ սպիտակուցների, ածխաջրերի, ճարպերի, վիտամինների և հանքային տարրերի վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը ներկայացնում է սննդի հիգիենայի հիմնական սկզբունքները, սննդի բաղադրատարրերի նշանակությունը և ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • սննդի հիգիենայի սկզբունքները, • սննդի բաղադրատարրերի նշանակությունը, • սննդի բաղադրատարրերի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել արտաքին և ներքին միջավայրերի վնասակար գործոնների ազդեցությունը մարդու առողջության և

	կենսագործունեության վրա
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում արտաքին միջավայրի վնասակար ազդեցությունը, 2) ճիշտ է կազմակերպում դեղագործական կազմակերպության միկրոմիջավայրի մշտադիտարկումը, 3) ճիշտ է իրականացնում անհրաժեշտ բնապահպանական միջոցառումներ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ արտաքին միջավայրի վնասակար ազդեցության վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողն իրականացնում է դեղագործական կազմակերպության միկրոմիջավայրի մշտադիտարկում և անհրաժեշտ բնապահպանական միջոցառումներ: Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • արտաքին միջավայրի վնասակար ազդեցությունը և բնապահպանական միջոցառումները, • դեղագործական կազմակերպության միկրոմիջավայրի մշտադիտարկումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Տալ դեղագործական կազմակերպության միկրոկլիմայի (լուսավորության, խոնավության, ջերմաստիճանի, օդափոխության և այլնի) համալիր հիգիենիկ գնահատականը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հողի, ջրի, օդի աղտոտման աստիճանները և աղբյուրները, 2) ճիշտ է վերլուծում ներքին միջավայրի նախագիծը և ֆիզիկական ցուցանիշները (լուսավորությունը, խոնավությունը, ջերմաստիճանը, օդափոխությունը և այլն):
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ հողի, ջրի, օդի աղտոտվածության

	<p>վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողն իրականացնում է ջերմաստիճանի, խոնավության չափումներ, վերլուծում է ներքին միջավայրի նախագիծը:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • հողի, ջրի, օդի աղտոտվածությունը, • ներքին միջավայրի նախագիծը և ֆիզիկական ցուցանիշները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, ջերմաչափ, խոնավաչափ և այլ չափիչ սարքեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Կանխարգելել մասնագիտական հիվանդությունների առաջացումը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մասնագիտական հիվանդությունների առաջացման աղբյուրները, 2) ճիշտ է ներկայացնում դեղատներում կիրառվող հիմնական քիմիական միացությունների թունաբանական բնութագիրը, 3) ճիշտ է մեկնաբանում արտադրական փոշիների, աղմուկի, վիբրացիայի և այլ գործոնների ազդեցությունը օրգանիզմի վրա՝ որպես մասնագիտական հիվանդությունների առաջացման աղբյուր, 4) ճիշտ է ներկայացնում աշխատողի անձնական հիգիենայի պահպանման սկզբունքները, 5) ճիշտ է կազմում համալիր միջոցառումների պլան՝ մասնագիտական հիվանդությունների կանխարգելման նպատակով, 6) ճիշտ է պահպանում սանիտարա-հիգիենիկ նորմերը՝ դեղագործական կազմակերպությունում:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ մասնագիտական հիվանդությունների</p>

	<p>առաջացման աղբյուրների վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ներկայացնում է սանիտարա-հիգիենիկ նորմերը՝ դեղագործական կազմակերպությունում և աշխատողի անձնական հիգիենայի պահպանման սկզբունքները: Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> մասնագիտական հիվանդությունների առաջացման աղբյուրները և կանխարգելումը, աշխատողի անձնական հիգիենան և սանիտարա-հիգիենիկ նորմերը՝ դեղագործական կազմակերպությունում: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԴԵԴ-5-19-010
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բիզնես գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ: Դրանք ներառում են ինքնուրույն բիզնես կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման հմտություններ, որոնցում հաշվի է առնված ինչպես գործարար ոլորտին հատուկ սկզբունքները, այնպես էլ բիզնես գործունեությունը կարգավորող իրավական դաշտի առանձնահատկությունները
Մոդուլի տևողությունը	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 22 ժամ գործնական աշխատանք՝ 50 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի 1 և 2 ուսումնառության արդյունքներն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ: Մյուս ուսումնառության արդյունքների ուսումնասիրությունը նպատակահարմար է իրականացնել որոշակի

	մասնագիտական մոդուլներ յուրացնելուց հետո, որպեսզի դրանց գործնական ձեռքբերումները օգտագործվեն համապատասխան ծրագրեր մշակելու համար:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը, 2) ներկայացնի կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը, 3) կատարի շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ, 4) բնութագրի կազմակերպության ռեսուրսները և գնահատի օգտագործման արդյունավետությունը, 5) կատարի ծախսերի հաշվարկ, ձևավորի ապրանքի (ծառայության) գինը, 6) մշակի բիզնես պլան և գործողությունների ծրագիր, 7) հաշվի հարկեր, տուրքեր, կազմի ֆինանսական հաշվետվություններ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բիզնես-գործունեության էությունը ճիշտ է մեկնաբանում, 2) բիզնես-գործունեության տեսլականը, նպատակը և ռազմավարությունը ճիշտ է սահմանում, 3) բիզնես-գործունեության համար նախընտրելի անձնային հատկանիշների կարևորությունը հիմնավորում է, 4) բիզնես-գործունեության համար սեփական հնարավորությունների գնահատումը ճիշտ է, 5) բիզնես-գաղափարի էությունը ճիշտ է մեկնաբանում, 6) բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացի բաղադրիչների իմաստը ճիշտ է մեկնաբանում, 7) ըստ իրավիճակների հիմնավորում է ձևավորված բիզնես-գաղափարները, 8) բիզնես-գաղափարի տարբերակի գնահատումը ճիշտ է:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և անհատական գործնական առաջադրանքների հիման վրա: Քննարկումների ընթացքում բացահայտվում է բիզնես-գաղափարի և բիզնես-գործունեության հիմնական հասկացությունների վերաբերյալ ուսանողների յուրացրած գիտելիքների մակարդակը, իսկ գործնական

	<p>հանձնարարությունների միջոցով նրանք ըստ իրավիճակի ներկայացնում և հիմնավորում են կոնկրետ բիզնես-գաղափար, որոշակիացնում են իրենց նախընտրած գործունեության տեսակը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բիզնես-գաղափարը որպես բիզնես-գործունեության մեկնակետ, դրա ձևավորման նախադրյալները: Բիզնես-գաղափարի իրատեսությունը հիմնավորող ցուցիչները: Օրենսդրական դաշտի պահանջները հաշվի առնելու կարևորությունը: Գործարար միջավայրի օբյեկտիվ գնահատման կարևորությունը և մոտեցումները: Սեփական գործարար հնարավորությունների բացահայտումը և անաչառության կարևորությունը: Բիզնես-գործունեության համար նախընտրելի ոլորտի ընտրությունը: Տեսլականի, նպատակի և ռազմավարության հստակ և հիմնավորված ձևակերպումը: Վերջնական բիզնես-գաղափարի գնահատումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկումների ընթացքում ուսանողը ցուցաբերում է հիմնավորված եզրահանգումներ անելու ունակություն, իսկ գործնական առաջադրանքների ընթացքում ներկայացնում է տվյալ իրավիճակում առավել նախընտրելի ու հիմնավորված լուծումներ:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքների անհրաժեշտ փուլերում անհրաժեշտ է կիրառել մտագրոհի տեխնիկան՝ հետագա քննարկման ուղղությունները ձևավորելու համար:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ֆլիպչարտ, գունավոր թղթեր, ամրակներ, տարբեր գույնի մարկերներ, ուսուցողական իրավիճակների նկարագրեր, բիզնես-գաղափարների հաջողված օրինակներ, տեսլականի, նպատակի և ռազմավարության ուսուցողական ձևակերպումներ՝ նաև ոչ հստակ ձևակերպված:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) կազմակերպության կազմակերպչա-իրավական ձևերի բնութագիրը ճիշտ է, 2) կազմակերպության աշխատանքը կարգավորող իրավական ակտերի պահանջների ընկալումը ճիշտ է, 3) կազմակերպության ստեղծման քայլերի հաջորդականությունը ճիշտ է մեկնաբանում,

	<p>4) կազմակերպության ստեղծման համար պահանջվող փաստաթղթերի ձևավորումը ճիշտ է,</p> <p>5) կազմակերպության կառավարման անհրաժեշտությունը և խնդիրները ճիշտ է մեկնաբանում,</p> <p>6) կառավարման ֆունկցիաների բնութագրերը ճիշտ է,</p> <p>7) կառավարման ոճերի բնութագրերը ճիշտ է,</p> <p>8) կառավարման ֆունկցիոնալ բաժինների ձևավորման մոտեցումները ճիշտ է,</p> <p>9) աշխատատեղերի ձևավորման և պարտականությունների բաշխման մոտեցումները հիմնավոր է,</p> <p>10) աշխատողների ընտրության կարգը հիմնավոր է,</p> <p>11) կազմակերպության կառավարմանն առընչվող փաստաթղթերի ձևավորումը ամբողջական և հիմնավոր է,</p> <p>12) կնքվելիք պայմանագրերի կազմը և բովանդակությունը իրավաբանորեն ճիշտ է,</p> <p>13) կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումները հիմնավոր է:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարականների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվում է տարբեր կազմակերպչա-իրավական ձև ունեցող կազմակերպությունների, դրանց կառավարման առանձնահատկությունների վերաբերյալ ուսանողի գիտելիքները, իսկ գործնական հանձնարարությունների միջոցով ուսանողը պետք է տրված պայմաններին համապատասխան կազմի տարբեր փաստաթղթեր: Գործնական հանձնարարությունները նպատակահարմար է առաջադրել ըստ ուսուցման փուլերի:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Կազմակերպության հասկացությունը և բնութագիրը: Կազմակերպությունների տիպերը, դրանց բնութագրիչ առանձնահատկությունները: Կազմակերպությունների ստեղծման ու գրանցման կարգը: Գործընթացի օրենսդրական կարգավորումը: Կազմակերպության կանոնադրությունը: Կազմակերպության կառավարման խնդիրները, ֆունկցիաները: Կառավարման ոճերը, դրանց առանձնահատուկ գծերը: Կառավարման ապարատի կառուցվածքը, ստորաբաժանումները: Կառավարման բաժինների առանձնացման սկզբունքները: Աշխատանքի բաժանման անհրաժեշտությունը, աշխատատեղերի ձևավորման մոտեցումները տարբեր մեծության կազմակերպություններում: Կազմակերպության փաստաթղթային տնտեսության ընդհանուր բնութագիրը, փաստաթղթերի ձևավորման կարգը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե թեստային առաջադրանքները կատարվում է հիմնականում ճիշտ,</p>

	ոչ էական թերություններով, իսկ գործնական առաջադրանքները տրված պայմաններին համապատասխան կատարվում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է կիրառել առանձին իրավիճակների խմբային քննարկումներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ու ցուցադրական նյութեր, տարբեր փաստաթղթերի նմուշներ, առանձին կազմակերպություններում աշխատանքի բաժանման, աշխատողների ֆունկցիաների սահմանման օրինակներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կատարել շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է մեկնաբանում <<շուկա>> հասկացությունը, 2) շուկայի հետազոտման անհրաժեշտությունը հիմնավորում է, 3) շուկայի հետազոտման հիմնական ուղղությունները բացահայտում է, 4) շուկայի հետազոտման գործընթացի փուլերը ճիշտ է բնութագրում, 5) ըստ փուլերի շուկայի հետազոտման մեթոդների ընտրությունը հիմնավոր է, 6) շուկայական պահանջարկի ծավալի բացահայտման մոտեցումները ճիշտ է, 7) շուկայի վրա ազդող գործոնների և գնորդի վարքագծի գնահատումը ճիշտ է, 8) շուկայական մրցակցության գնահատումը հիմնավոր է, 9) շուկայի հատվածավորումը իրատեսական է, 10) մարքեթինգի գաղափարների /4P և 7P/ նշանակությունը ճիշտ է բացահայտում, 11) մարքեթինգային ռազմավարության մշակման մոտեցումները հիմնավորված է:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքների, խմբային քննարկումների և գործնական հանձնարարությունների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվելու է շուկայի վերաբերյալ հիմնական հասկացությունների ճիշտ ընկալման ուսանողի կարողությունը, իսկ գործնական առաջադրանքների միջոցով նա կատարելու է իրավիճակին համապատասխան եզրահանգումներ /հնարավորության դեպքում կարող են

	<p>օգտագործվել նաև ուսանողների ինքնուրույն դիտարկումների ու հետազոտությունների արդյունքները/ Արդյունքները անհրաժեշտ է քննարկել խմբում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Շուկայի բնութագիրը: Շուկայի հետազոտության անհրաժեշտությունը և հիմնական ուղղությունները: Շուկայի հետազոտության գործընթացը: Շուկայական պահանջարկի գնահատումը: Շուկայի վրա ազդող գործոնները, գնորդի վարքագիծը: Մրցակցություն, դրա գնահատումը: Շուկայի հատվածավորումը: Մարքեթինգի 4 և 7 P-երը: Մարքեթինգային ռազմավարության էությունը և մշակման կարևորությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը թեստային և գործնական առաջադրանքները ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում, իսկ խմբային քննարկումների ընթացքում ցուցաբերում է իրավիճակին հիմնավորված արձագանքելու ունակություններ:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտազորիի տեխնիկան:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, շուկայական իրավիճակների նկարագրեր, տիպական իրավիճակներում առավել հիմնավորված լուծումների օրինակներ, գործնական կիրառություն ունեցող փաստաթղթերի նմուշներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Բնութագրել կազմակերպության ռեսուրսները և գնահատել օգտագործման արդյունավետությունը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) կազմակերպության ռեսուրսների կազմը և կառուցվածքը ճիշտ է բացահայտում, 2) կազմակերպության ռեսուրսների խմբերի միջև օպտիմալ հարաբերակցության ապահովման անհրաժեշտությունը հիմնավորում է, 3) նյութական ռեսուրսների խմբերի տնտեսագիտական բնութագրերը ճիշտ է, 4) աշխատանքային ռեսուրսների բնութագիրը և դրանց առընչվող ցուցանիշների մեկնաբանությունը ճիշտ է, 5) աշխատանքի տեխնիկական նորմավորման էությունը ճիշտ է բացատրում, նորմաների մեծության ձևավորման մեխանիզմը ճիշտ է ներկայացնում,

	<p>6) ֆինանսական ռեսուրսների հետ կապված հասկացությունների բացատրությունը ճիշտ է,</p> <p>7) ֆինանսական ռեսուրսների համալրման աղբյուրների առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում,</p> <p>8) ռեսուրսների պահանջվելիք մեծության հաշվարկման մոտեցումները հիմնավոր է,</p> <p>9) հիմնական կապիտալի առանձին խմբերի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</p> <p>10) շրջանառու կապիտալի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</p> <p>11) աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</p> <p>12) ռեսուրսների օգտագործման վերաբերյալ պարզ վերլուծական գործողությունները և ըստ արդյունքների եզրահանգումները հիմնավոր է:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ռեսուրսների տարբեր խմբերի հաշվել առավել ընդհանուր նշանակություն ունեցող ցուցանիշները: Նպատակահարմար է գործնական առաջադրանքները հանձնարարել փոփոխվել՝ ըստ ռեսուրսների խմբերի: Քննարկումների ընթացքում նրանք ոչ միայն գնահատելու են ստացված արդյունքները, այլ նաև առաջարկելու են լուծումների սեփական տարբերակները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Կազմակերպության ռեսուրսների ընդհանուր բնութագիրը: Նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներ, դրանց կազմը: Հիմնական կապիտալ և շրջանառու կապիտալ: Ֆինանսական ռեսուրսներ: Ռեսուրսների մեծությունը բնութագրող ցուցանիշները: Ռեսուրսների օգտագործման մակարդակը բնութագրող ցուցանիշները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքները մեթոդապես ճիշտ են կատարվում:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, գործնական հանձնարարությունների փաթեթներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p>

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորել ապրանքի /ծառայության/ գինը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) <<ծախս>> հասկացության բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում, 2) տարբերակում է ծախսերի խմբերը, 3) ծախսերը հիմնավորող փաստաթղթերի տեսակները և վավերապայմանները ճիշտ է ներկայացնում, 4) ծախսերի տարբեր խմբերի հաշվապահական ձևակերպումները ճիշտ է, 5) ապրանքների տարբեր տեսակների և ծառայությունների տարբեր խմբերի համար պահանջվող ծախսերի կազմը հիմնավոր է ներկայացնում, 6) ապրանքի կամ ծառայության ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի հոդվածները ճիշտ է ներկայացնում, 7) ինքնարժեքի տարբեր հոդվածների մեծության հաշվարկման մեթոդաբանությունը ճիշտ է կիրառում, 8) հաշվում է ապրանքի կամ ծառայության միավորի ինքնարժեքը, 9) ինքնարժեքի իջեցման հնարավորությունները ճիշտ է գնահատում, 10) ինքնարժեք-շուկայական գին մարժայի տարբերության հիմնավորումը ճիշտ է, 11) անհատական գնից շուկայական գնի անցման տրամաբանությունը բացատրում է:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ծախսերի առանձին հոդվածների կատարել միավոր արտադրանքի կամ ծառայության համար դրանց հաշվարկները և որոշել ինքնարժեքն ու գինը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի հասկացությունը: Ուղղակի և անուղղակի ծախսեր, կայուն և փոփոխական ծախսեր: Ծախսերի մեծության հաշվարկման մեթոդաբանությունը: Ծախսերի հաշվապահական ձևակերպման կարգը: Անալիտիկ և սինթետիկ հաշվառման կազմակերպումը: Միավորի ինքնարժեքի ծախսային հոդվածները: Ինքնարժեքի հաշվարկը: Շահույթի նորմայի հասկացությունը և կիրառումը: Արտադրանքի գնի մեծության հաշվարկը: Անհատական գնից շուկայական գնին անցման գործընթացը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե հաշվարկները կատարվում է ճիշտ:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գործնական հանձնարարությունների փաթեթներ, հաշվարկների կատարման ընթացքում օգտագործվող օրինակելի ձևաթղթեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բիզնես գործունեության համար բիզնես պլանի անհրաժեշտությունը հիմնավորում է, 2) բիզնես պլանի բաժինների բովանդակության մեկնաբանությունները ճիշտ է, 3) բիզնես պլանի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը և ձեռք բերման աղբյուրները ճիշտ է ներկայացնում, 4) ճիշտ է կատարում SWOT վերլուծություն, 5) SWOT վերլուծության արդյունքները կիրառում է բիզնես պլանը մշակելու գործընթացում, 6) բիզնես պլանով նախատեսվող միջոցառումները հիմնավորված է, 7) բիզնես պլանի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը, ժամանակացույցը հիմնավոր է, 8) բիզնես պլանի կատարումն ապահովող ռեսուրսների մեծությունները ճիշտ է սահմանվել, 9) բիզնես պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ռիսկերը և դրանց հաղթահարման քայլերը հիմնավոր են:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է կազմված բիզնես պլանի հիման վրա, որում պետք է արտացոլված լինեն նախատեսված բիզնես գործունեության վերաբերյալ բոլոր հայտնի տեղեկությունները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Բիզնես պլանի բովանդակությունը և բաժիններում ներառվող հարցերը: Բիզնես պլանի կազմման համար անհրաժեշտ ելակետային տվյալները, դրանց աղբյուրները: SWOT վերլուծության արդյունքների կիրառումը պլանը կազմելու ժամանակ: Բիզնես պլանի կատարման գործողությունների ծրագիրը, դրա կազմման մոտեցումները: Գործողությունների ժամանակացույցը: Պլանի կատարման հնարավոր ռիսկերը, դրանց հաղթահարման

	միջոցառումները: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պլանը կազմված է ճիշտ և հիմնավորված:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բիզնես պլանի բովանդակությանը համապատասխան ձևաթղթեր, մեթոդական հանձնարարականներ, պլանը կազմելու համար օգտագործվող ելակետային տվյալներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
Ուսումնառության արդյունք 7	Հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) հարկային օրենսդրության հիմնական դրույթները ճիշտ է մեկնաբանում, 2) հարկային օրենսդրության հիմնական հասկացությունները ճիշտ է բացատրում, 3) հարկերի և տուրքերի մեծությունը հաշվելու համար կիրառվող ելակետային ցուցանիշների հաշվարկը ճիշտ է կատարում, 4) հարկերի և տուրքերի մեծությունը ճիշտ է հաշվարկում, 5) հարկերի վճարման ժամկետների գնահատումը համապատասխանում է օրենսդրության պահանջներին, 6) ֆինանսական հաշվետվությունների կազմը ճիշտ է ներկայացնում, 7) անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ է լրացնում, 8) ստուգումների իրականացման իրավական ակտերի պահանջները ճիշտ է բացատրում, 9) ստուգումների հետ կապված տնտեսվարողի իրավունքներն ու պարտականությունները ճիշտ է ներկայացնում:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է հաշվել հարկերի և տուրքերի գումարները, լրացնել ֆինանսական հաշվետվություններ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և տուրքերի տեսակները, դրանց տնտեսական նշանակությունը: Հարկային օրենսդրության հիմնական դրույթները: Հարկերի հաշվարկման կարգը և

	<p>դրույքաչափերը: Հարկատուների պատասխանատվությունը հարկային օրենսդրության պահանջների պահպանման համար: Ֆինանսական հաշվետվությունների տեսակները, հաշվետվությունների լրացման և ներկայացման կարգը: Ստուգումների անցկացումը, կարգը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները ճիշտ է կատարում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, հարկերի վերաբերյալ օրենքներ և նորմատիվ փաստաթղթեր, մեթոդական նյութեր, հաշվետվությունների ձևաթղթեր, հաշվարկները կատարելու համար օգտագործվող ելակետային նյութերի փաթեթներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱ»	
Մոդուլի դասիչը	ԴԵՂ-05-19-011
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել դեղերի քիմիական դասակարգման, ստանդարտավորման, դեղերի որակական և քանակական անալիզի իրականացման վերաբերյալ գիտելիքներ և կարողություններ:</p>
Մոդուլի տևողությունը	<p>90 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական աշխատանք՝ 70 ժամ</p>
Մուտքային պահանջները	<p>Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԴԵՂ-5-19-004 «Անալիտիկ քիմիա» մոդուլը:</p>
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) կատարի դեղերի քիմիական դասակարգում, օգտվի Պետական դեղագրքից (Ֆարմակոպեայից) և այլ նորմատիվ փաստաթղթերից, 2) իրականացնի անօրգանական ծագման դեղերի մեջ մտնող կատիոնների որակական անալիզ, 3) իրականացնի անօրգանական ծագման դեղերի մեջ մտնող կատիոնների քանակական անալիզ,

	<p>4) իրականացնի անօրգանական ծագման դեղերի մեջ մտնող անիոնների որակական անալիզ,</p> <p>5) իրականացնի օրգանական ծագման դեղերի մեջ մտնող ֆունկցիոնալ խմբերի որակական անալիզ:</p>
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել դեղերի քիմիական դասակարգում, օգտվել Պետական դեղագրքից (Ֆարմակոպեայից) և այլ նորմատիվ փաստաթղթերից
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է դասակարգում դեղերը՝ ըստ քիմիական խմբերի,</p> <p>2) ճիշտ է օգտվում Պետական դեղագրքից (Ֆարմակոպեայից) և այլ նորմատիվային փաստաթղթերից:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ուսանողը պետք է կարողանա դասակարգել դեղերը՝ ըստ քիմիական խմբերի: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա ճիշտ օգտվել Պետական դեղագրքից և այլ նորմատիվային փաստաթղթերից:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • ըստ քիմիական խմբերի դեղերի դասակարգումը, • Պետական դեղագրքից և այլ նորմատիվային փաստաթղթերից օգտվելու կանոնները: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, Պետական դեղագիրք և այլ նորմատիվային փաստաթղթեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Իրականացնել անօրգանական ծագման դեղերի մեջ մտնող կատիոնների որակական անալիզ
Կատարման չափանիշներ	3) ճիշտ է ընտրում կատիոններին բնորոշ հայտնաբերիչները (ռեագենտները),

	<p>4) ճիշտ է ընտրում անհրաժեշտ նյութերի քանակները՝ ըստ կատիոնի,</p> <p>5) ճիշտ է կատարում քիմիական ռեակցիան և ստանում արդյունքը (գազ, նստվածք, գույն, հոտ և այլն):</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա կատարել անօրգանական ծագման դեղերի մեջ մտնող կատիոնների որակական անալիզ:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • կատիոններին բնորոշ հայտնաբերիչները (ռեագենտները), • ըստ կատիոնի անհրաժեշտ նյութերի քանակների ընտրությունը: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, կատիոններ պարունակող անօրգանական ծագման դեղեր, հայտնաբերիչներ (ռեագենտներ), լաբորատոր ամանեղեն:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 14 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Իրականացնել անօրգանական ծագման դեղերի մեջ մտնող կատիոնների քանակական անալիզ</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում տիտրատը և տիտրվող նյութը,</p> <p>2) ճիշտ է կատարում տիտրումը՝ մինչև էկվիվալենտ կետի ստացումը,</p> <p>3) ճիշտ է կատարում հաշվարկներ՝ կիրառելով համապատասխան բանաձևերը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա ճիշտ ընտրել տիտրատը և տիտրվող նյութը, կատարել հաշվարկներ և տիտրել:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • անօրգանական ծագման դեղերի մեջ մտնող կատիոնների քանակական անալիզ (տիտրում),

		<ul style="list-style-type: none"> • հաշվարկներ՝ բանաձևերի օգնությամբ: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը	և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, կատիոններ պարունակող անօրգանական ծագման դեղեր, նյութեր, լաբորատոր ամանեղեն:
Ուսուցման ժամաքանակը	երաշխավորված	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
Ուսումնառության արդյունք 4		Իրականացնել անօրգանական ծագման դեղերի մեջ մտնող անիոնների որակական անալիզ
Կատարման չափանիշներ		<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում անիոններին բնորոշ հայտնաբերիչները (ռեագենտները), 2) ճիշտ է ընտրում անհրաժեշտ նյութերի քանակները՝ ըստ անիոնի, 3) ճիշտ է կատարում քիմիական ռեակցիան և ստանում արդյունքը (գազ, նստվածք, գույն, հոտ և այլն):
Գնահատման միջոցը		<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա ընտրել հայտնաբերիչները (ռեագենտները) և կատարել քիմիական ռեակցիա:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • հայտնաբերիչների (ռեագենտների) ընտրությունը, • անօրգանական ծագման դեղերի մեջ մտնող անիոնների որակական անալիզը: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը	և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, անիոններ պարունակող անօրգանական ծագման դեղեր, հայտնաբերիչներ (ռեագենտներ), լաբորատոր ամանեղեն:
Ուսուցման ժամաքանակը	երաշխավորված	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
Ուսումնառության արդյունք 5		Իրականացնել օրգանական ծագման դեղերի մեջ մտնող ֆունկցիոնալ խմբերի որակական անալիզ

Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում համապատասխան հայտնաբերիչները (ռեագենտները),</p> <p>2) ճիշտ է կատարում քիմիական ռեակցիան և ստանում արդյունքը՝ ըստ Պետական դեղագրքի (Ֆարմակոպեայի) և այլ նորմատիվ փաստաթղթերի:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա ընտրել հայտնաբերիչները (ռեագենտները) և կատարել ռեակցիան:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • հայտնաբերիչների (ռեագենտների) ընտրությունը, • օրգանական ծագման դեղերի մեջ մտնող ֆունկցիոնալ խմբերի որակական անալիզ՝ ըստ Պետական դեղագրքի: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, անիոններ օրգանական ծագման դեղեր, հայտնաբերիչներ (ռեագենտներ), լաբորատոր ամանեղեն:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԱՐՄԱԿՈԳՆՈԶԻԱ»	
	ԴԵՂ-05-19-012
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել բնական ծագում ունեցող դեղերի ստացման աղբյուրների, դեղաբուսական հումքի քիմիական կազմի, ազդեցության, ինչպես նաև դեղաբուսական հումքի տարբերակման, մթերման վերաբերյալ գիտելիքներ և կարողություններ:</p>
Մոդուլի տևողությունը	<p>90 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 66 ժամ</p>

Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած ԴԵՂ-5-19-006 «Բուսաբանության հիմունքներ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի բնական ծագման դեղերի ստացման աղբյուրները և այդ դեղերի տարատեսակները, 2) տիրապետի դեղաբուսական հումքի մթերման գործընթացին, 3) ճանաչի դեղաբուսական հումքի քիմիական կազմը, 4) տարբերակի դեղաբույսերը՝ ըստ ազդող նյութերի պարունակության և ազդեցության:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել բնական ծագման դեղերի ստացման աղբյուրները և այդ դեղերի տարատեսակները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում բնական ծագման դեղերի ստացման աղբյուրները, 2) ճիշտ է տարբերակում բնական ծագում ունեցող դեղերը, 3) ճիշտ է ներկայացնում դեղաբուսական հումքից պատրաստվող դեղերը և դեղաձևերը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ բնական ծագման դեղերի ստացման աղբյուրների վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա տարբերակել բնական ծագում ունեցող դեղերը և դեղաձևերը:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • բնական ծագման դեղերի ստացման աղբյուրները, • դեղաբուսական հումքից պատրաստվող դեղերը և դեղաձևերը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, բնական

	ծագման դեղերի տուփեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Տիրապետել դեղաբուսական հումքի մթերման գործընթացին
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում դեղաբույսի հումք հանդիսացող մասը, 2) ճիշտ է հասկանում դեղաբուսական հումքի լատիներենով գրված անունները, 3) ճիշտ է ներկայացնում դեղաբուսական հումքի հավաքման կարգը, 4) ճիշտ է ներկայացնում դեղաբուսական հումքի չորացման պայմանները, 5) ճիշտ է տեսակավորում դեղաբուսական հումքը, 6) ճիշտ է տարբերակում դեղաբուսական հումքը, 7) ճիշտ է փաթեթավորում դեղաբուսական հումքը, 8) ճիշտ է ներկայացնում դեղաբուսական հումքի պահպանման կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ դեղաբուսական հումքի մթերման գործընթացի վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա տեսակավորել դեղաբուսական հումքը, տարբերակել և փաթեթավորել:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • դեղաբուսական հումքի մթերումը, • փաթեթավորումը և պահպանումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, դեղաբուսական հումք (խոտ, ծաղիկներ, արմատներ, պտուղներ և այլն):

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ճանաչել դեղաբուսական հումքի քիմիական կազմը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում տվյալ դեղաբուսական հումքում պարունակվող ազդող նյութը, 2) ճիշտ է ներկայացնում դեղաբուսական հումքի քիմիական կազմը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ դեղաբուսական հումքի քիմիական կազմի վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա ներկայացնել դեղաբուսական հումքի քիմիական կազմը և ազդող նյութը: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> • դեղաբուսական հումքի քիմիական կազմը, • դեղաբուսական հումքում պարունակվող ազդող նյութը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, դեղաբուսական հումք (խոտ, ծաղիկներ, արմատներ, պտուղներ և այլն):
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Տարբերակել դեղաբույսերը՝ ըստ ազդող նյութերի պարունակության և ազդեցության
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է տարբերակում դեղաբույսերի մեջ պարունակվող ազդող նյութերի հիմնական խմբերը, 2) ճիշտ է ներկայացնում ազդող նյութերի հիմնական խմբերի դեղաբանական ազդեցությունը, 3) ճիշտ է դասակարգում դեղաբույսերը՝ ըստ հիմնական ազդող նյութերի պարունակության, 4) ճիշտ է ներկայացնում տվյալ դեղաբուսական հումքում պարունակվող ազդող նյութի դեղաբանական

	ազդեցությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ դեղաբույսերում ազդող նյութերի հիմնական խմբերի և դրանց ազդեցության վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա ներկայացնել տվյալ դեղաբուսական հումքում պարունակվող ազդող նյութի դեղաբանական ազդեցությունը:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> դեղաբույսերի մեջ պարունակվող ազդող նյութերի հիմնական խմբերը, դրանց ազդեցությունը, դեղաբույսերի դասակարգումը՝ ըստ հիմնական ազդող նյութերի պարունակության: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, դեղաբուսական հումք (խոտ, ծաղիկներ, արմատներ, պտուղներ և այլն):
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԵՂԵՐԻ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»	
Մոդուլի դասիչը	ԴԵՂ-05-19-013
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել դեղատնային պայմաններում տարբեր դեղաձևերի (կարծր, հեղուկ, փափուկ) բնութագրման, դասակարգման, պատրաստման վերաբերյալ գիտելիքներ և կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 18 ժամ գործնական աշխատանք՝ 36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԴԵՂ-5-19-003 «Օրգանական

	քիմիայի հիմունքներ» և ԴԵՂ-5-19-012 «Ֆարմակոգնոզիա» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> 1) տարբերակի փոշիների տեսակները (պարզ, բարդ, դոզավորված, չդոզավորված), կատարի հաշվարկներ, 2) պատրաստի փոշիներ՝ ըստ դեղանյութերի առանձնահատկությունների, 3) կատարի փոշիների դեղաչափում, 4) կատարի փոշու համապատասխան փաթեթավորում, 5) բնութագրի և տարբերակի հեղուկ դեղաձևերի տեսակները, կատարի նախնական հաշվարկներ, 6) կատարի դեղանյութերի ավելացում լուծիչի մեջ՝ հաշվի առնելով դրանց ֆիզիկա-քիմիական հատկությունները և քանակները, 7) խցանափակի և ձևավորի բաց թողնվող հեղուկ դեղաձևը, 8) պատրաստի քսուքներ, լինիմենթներ, 9) տիրապետի մոմիկների տարբեր եղանակներով պատրաստմանը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տարբերակել փոշիների տեսակները (պարզ, բարդ, դոզավորված, չդոզավորված), կատարել հաշվարկներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բնութագրում փոշիները, 2) ճիշտ է տարբերակում փոշիները, 3) ճիշտ է հաշվում յուրաքանչյուր դեղանյութի չափաբաժինը, 4) ճիշտ է ստուգում “A” և “B” խմբի դեղանյութերի դեղաչափերը ըստ Պետական դեղագրքի (ՊՖ-ի), 5) ճիշտ է ընտրում համապատասխան հավանգի համարը ըստ փոշու ընդհանուր զանգվածի, 6) ճիշտ է հաշվում միանվազ օգտագործվող փոշու դեղաչափը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ փոշիների բնութագրման և տեսակների վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա կատարել փոշիների

	<p>պատրաստմանը նախորդող հաշվարկները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • փոշիների տեսակները (պարզ, բարդ, դոզավորված, չդոզավորված), • փոշիներ պատրաստելիս կիրառվող հաշվարկներ: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, հաշվիչներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Պատրաստել փոշիներ՝ ըստ դեղանյութերի առանձնահատկությունների</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում հավանգի ծակոտիների փակումը համապատասխան նյութերով, 2) պատրաստում է փոշիներ ներկող, հոտավետ, թեթև, դժվար մանրեցվող դեղանյութերով, հանուկներով, 3) կարողանում է հաշվել և պատրաստել “A” և “B” խմբի դեղանյութերով տրիտուրացիաներ, 4) տիրապետում է հավանգում փոշիների խառնման և հաջորդականության կանոններին, 5) խառնման արդյունքում ստանում է փոշիների համասեռ գունավորում, 6) կարողանում է օգտագործել հեղուկներ՝ չխախտելով փոշու սորունությունը:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա պատրաստել փոշիներ՝ հաշվի առնելով դեղանյութերի առանձնահատկությունները, փոշիների խառնման և հաջորդականության կանոնները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • փոշիների պատրաստումը՝ ըստ դեղանյութերի առանձնահատկությունների, • փոշիների խառնման և հաջորդականության կանոնները:

		Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը ռեսուրսները	և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, հավանգներ, կշեռքներ, կշռաքարեր, դեղանյութեր (փոշիներ, հանուկներ, հեղուկներ):
Ուսուցման ժամաքանակը	երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3		Կարողանալ կատարել փոշիների դեղաչափում
Կատարման չափանիշներ		1) ճիշտ է բաժանում փոշու ընդհանուր զանգվածը նշված դեղաչափերի, 2) ճիշտ է կշռում մեկ փոշու զանգվածը:
Գնահատման միջոցը		Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա դեղաչափել փոշիները: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> • փոշու ընդհանուր զանգվածի բաժանում դեղաչափերի, • մեկ փոշու զանգվածի կշռում: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը ռեսուրսները	և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, հավանգներ, կշեռքներ, կշռաքարեր, դեղանյութեր (փոշիներ, հանուկներ, հեղուկներ):
Ուսուցման ժամաքանակը	երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4		Կատարել փոշու համապատասխան փաթեթավորում
Կատարման չափանիշներ		1) ճիշտ է ընտրում փաթեթավորման նյութը՝ հաշվի առնելով դեղանյութերի ֆիզիկա-քիմիական հատկությունները, 2) ճիշտ է կատարում փաթեթավորման գործընթացը, 3) ճիշտ է ձևավորում համապատասխան պիտակներով:

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա փաթեթավորել և պիտակավորել փոշիները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • փոշիների փաթեթավորման նյութերը՝ կախված դեղանյութերի հատկություններից, • փոշիների պիտակները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, հավանգներ, կշեռքներ, կշռաքարեր, դեղանյութեր (փոշիներ, հանուկներ, հեղուկներ), փաթեթավորման նյութեր, պիտակներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Բնութագրել և տարբերակել հեղուկ դեղաձևերի տեսակները, կատարել նախնական հաշվարկներ</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է դասակարգում և բնութագրում հեղուկ դեղաձևերը, 2) ճիշտ է դասակարգում և բնութագրում լուծիչները, 3) ճիշտ է հաշվում չոր նյութի կշիռը և լուծիչի ծավալը՝ հաշվի առնելով ԾԱԳ-ը (Ծավալի ավելացման գործակիցը), 4) ճիշտ է հաշվում լուծիչի ծավալը՝ հաշվի առնելով օգտագործվող կոնցենտրիկ լուծույթների ծավալները, 5) ճիշտ է հաշվում դեղաբույսի կշիռը և լուծիչի ծավալը՝ ջրաթուրմ կամ եփուկ պատրաստելիս:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ հեղուկ դեղաձևերի և լուծիչների վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա կատարել հեղուկ դեղաձևերի պատրաստմանը նախորդող հաշվարկները:</p> <p>Ծրագրային մանրամասներ</p> <ul style="list-style-type: none"> • հեղուկ դեղաձևերի և լուծիչների դասակարգումը

	<ul style="list-style-type: none"> • հեղուկ դեղաձևեր պատրաստելիս կիրառվող հաշվարկներ <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, հաշվիչներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Կատարել դեղանյութերի ավելացում լուծիչի մեջ՝ հաշվի առնելով դրանց ֆիզիկա-քիմիական հատկությունները և քանակները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում հեղուկ դեղաձևի պատրաստման տեխնոլոգիան՝ լուծիչի տեսակը և դեղանյութերի ֆիզիկա-քիմիական առանձնահատկությունները, 2) ճիշտ է ընտրում ամանեղենը և բաց թողման սրվակը՝ հաշվի առնելով հեղուկ դեղաձևի ծավալը, 3) ճիշտ է կշռում չոր դեղանյութերը, 4) ճիշտ հաջորդականությամբ է ավելացնում կարծր դեղանյութերը, 5) ճիշտ է օգտագործում կոնցենտրիկ լուծույթները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա պատրաստել հեղուկ դեղաձևեր՝ հաշվի առնելով դեղանյութերի և լուծիչի առանձնահատկությունները, հաջորդականության կանոնները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • հեղուկ դեղաձևերի պատրաստումը՝ հաշվի առնելով դեղանյութերի և լուծիչի առանձնահատկությունները, • օժանդակ ամանեղենի և բաց թողման սրվակի ընտրությունը, • հեղուկ դեղաձևերի պատրաստման հաջորդականության կանոնները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>

Մեթոդաբանությունը ռեսուրսները	և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, հավանգներ, կշեռքներ, կշռաքարեր, դեղանյութեր, լուծիչներ, ամանեղեն:
Ուսուցման ժամաքանակը	երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 7		Կարողանալ խցանափակել և ձևավորել բաց թողնվող հեղուկ դեղաձևը
Կատարման չափանիշներ		1) ճիշտ է ընտրում խցանը՝ հաշվի առնելով հեղուկ դեղաձևի հատկությունները, 2) ճիշտ է կատարում պիտակավորումը:
Գնահատման միջոցը		Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա ճիշտ խցան ընտրել և պիտակավորել հեղուկ դեղաձևը: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> • խցանի ընտրությունը, • հեղուկ դեղաձևերի ձևավորումը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը ռեսուրսները	և	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, հավանգներ, կշեռքներ, կշռաքարեր, դեղանյութեր, լուծիչներ, ամանեղեն, խցաններ, պիտակներ:
Ուսուցման ժամաքանակը	երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 8		Պատրաստել քսուքներ, լինիմենթներ
Կատարման չափանիշներ		1) ճիշտ է կատարում նախնական հաշվարկները, 2) ճիշտ է կշռում դեղաձևի հիմքը, 3) ճիշտ է կշռում դեղանյութերը, 4) ճիշտ է ներմուծում դեղանյութը հիմքի մեջ,

	5) ճիշտ է ստանում հոմոգեն/հետերոգեն զանգված:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա կատարել հաշվարկներ, պատրաստել քսուքներ և լինիմենթներ: Ծրագրային մանրամասներ. <ul style="list-style-type: none"> • քսուքներ, լինիմենթներ պատրաստելիս կիրառվող հաշվարկներ, • քսուքների, լինիմենթների պատրաստումը՝ հաշվի առնելով դեղանյութերի և հիմքի առանձնահատկությունները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, հավանգներ, կշեռքներ, կշռաքարեր, դեղանյութեր, քսուքային հիմքեր, բուսական յուղեր, լուծիչներ, ամանեղեն, ջրային բաղնիք:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 9	Տիրապետել մոմիկների տարբեր եղանակներով պատրաստմանը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ընտրում մոմիկային հիմքը, 2) ճիշտ է հաշվում մոմիկային զանգվածը, 3) ճիշտ է հաշվում մեկ մոմիկի զանգվածը, 4) ճիշտ է պատրաստում մոմիկներ կաղապարների մեջ լցման եղանակով՝ օգտագործելով տեղակալման և հակադարձ տեղակալման գործակիցները, 5) ճիշտ է պատրաստում մոմիկներ՝ գլորակման եղանակով, 6) ճիշտ է ընտրում փաթեթավորման նյութը՝ կախված դեղանյութի ֆիզիկա-քիմիական հատկություններից:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Գործնական

	<p>առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա կատարել հաշվարկներ, պատրաստել մոմիկներ: Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • մոմիկներ պատրաստելիս կիրառվող հաշվարկներ, • մոմիկների պատրաստումը գլորակման կամ լցման եղանակով՝ հաշվի առնելով դեղանյութերի և հիմքի առանձնահատկությունները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, հավանգներ, կշեռքներ, կշռաքարեր, դեղանյութեր, մոմիկային հիմքեր, բուսական յուղեր, լուծիչներ, ամանեղեն, ջրային բաղնիք, հաբային մեքենա, կաղապարներ, փաթեթավորման նյութեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԵՂԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»	
Մոդուլի դասիչը	ԴԵՂ-05-19-014
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել գործարանային պայմաններում պատրաստվող տարբեր դեղաձևերի (կարծր, հեղուկ, փափուկ) բնութագրման, դասակարգման, պատրաստման եղանակների վերաբերյալ գիտելիքներ և կարողություններ:</p>
Մոդուլի տևողությունը	<p>72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 26 ժամ գործնական աշխատանք՝ 46 ժամ</p>
Մուտքային պահանջները	<p>Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԴԵՂ-5-19-013 «Դեղերի դեղատնային տեխնոլոգիա» մոդուլը:</p>
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) բնութագրի դեղերի գործարանային արտադրությանը ներկայացվող պահանջները,

	<p>2) պատրաստի դեղահատեր,</p> <p>3) բնութագրի և տարբերակի մանրէագերծ (ստերիլ) դեղաձևերի տեսակները, պատրաստման եղանակները և արտադրական գործընթացի հիմնական փուլերը,</p> <p>4) պատրաստի ոգեթուրմեր,</p> <p>5) բնութագրի և տարբերակի քսուքների, մոմիկների, սպեղանիների տեսակները, պատրաստման եղանակները և արտադրական գործընթացի հիմնական փուլերը:</p>
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բնութագրել դեղերի գործարանային արտադրությանը ներկայացվող պահանջները
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ՊԱԳ-ի (պատշաճ արտադրական գործընթացի) պահանջները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում արտադրության ընթացքում կատարվող փաստաթղթաշրջանառությունը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ ՊԱԳ-ի վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա ներկայացնել արտադրության ընթացքում կատարվող փաստաթղթաշրջանառությունը:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • ՊԱԳ-ի պահանջները, • փաստաթղթաշրջանառությունը՝ արտադրության ընթացքում: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ

Ուսումնառության արդյունք 2	Պատրաստել դեղահատեր
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բնութագրում դեղահատերը, դեղապատիճները, 2) ճիշտ է ներկայացնում դեղահատերի, դեղապատիճների տեսակները, 3) ճիշտ է ներկայացնում օժանդակ նյութերի դերը և դասակարգումը, 4) ճիշտ է բնութագրում դեղահատերի, դեղապատիճների պատրաստման եղանակները, 5) ճիշտ է ներկայացնում դեղահատերի, դեղապատիճների արտադրական գործընթացի հիմնական փուլերը, 6) ճիշտ է պատրաստում դեղահատերը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ դեղահատերի, դեղապատիճների, օժանդակ նյութերի բնութագրման և դասակարգման վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա պատրաստել դեղահատեր:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • դեղահատերի, դեղապատիճների տեսակները, • օժանդակ նյութերի դերը և դասակարգումը, • դեղահատերի, դեղապատիճների պատրաստման եղանակները և փուլերը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, հավանգներ, կշեռքներ, կշռաքարեր, դեղանյութեր, օժանդակ նյութեր, ամանեղեն, դեղահատավորման մեքենա:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք3	<p>Բնութագրել և տարբերակել մանրէազերծ (ստերիլ) դեղաձևերի տեսակները, պատրաստման եղանակները և արտադրական գործընթացի հիմնական փուլերը</p>

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բնութագրում «մանրէագերծում» հասկացությունը, 2) ճիշտ է ներկայացնում ներարկման լուծույթները, դրանց տեսակները, 3) ճիշտ է բնութագրում աչքի կաթիլները, դրանց տեսակները, 4) ճիշտ է ներկայացնում օժանդակ նյութերի (կայունացուցիչների, կոնսերվանտների և այլնի) դերը, դասակարգումը, 5) ճիշտ է բնութագրում պատրաստման եղանակները, 6) ճիշտ է ներկայացնում արտադրական գործընթացի հիմնական փուլերը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ մանրէագերծման, ներարկման լուծույթների, աչքի կաթիլների, օժանդակ նյութերի վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա ներկայացնել ներարկման լուծույթների և աչքի կաթիլների պատրաստման եղանակները և փուլերը:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • ներարկման լուծույթների և աչքի կաթիլների տեսակները, • օժանդակ նյութերի դերը և դասակարգումը, • պատրաստման եղանակները և փուլերը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Պատրաստել ոգեթուրմեր</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բնութագրում ոգեթուրմերը, 2) ճիշտ է ներկայացնում էթիլ սպիրտի դերը՝ ոգեթուրմեր պատրաստելիս,

	<p>3) ճիշտ է բնութագրում պատրաստման եղանակները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում արտադրական գործընթացի հիմնական փուլերը,</p> <p>5) ճիշտ է պատրաստում ոգեթուրմերը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ ոգեթուրմերի բնութագրման և դասակարգման, էթիլ սպիրտի վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա պատրաստել ոգեթուրմեր:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • ոգեթուրմերի պատրաստման եղանակները և փուլերը, • էթիլ սպիրտի դերը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, հավանգներ, կշեռքներ, կշռաքարեր, բուսական հումք, էթիլ սպիրտ, ամանեղեն, պերկոլյատոր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Բնութագրել և տարբերակել քսուքների, մոմիկների, սպեղանիների տեսակները, պատրաստման եղանակները և արտադրական գործընթացի հիմնական փուլերը</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բնութագրում քսուքները, մոմիկները, սպեղանիները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում քսուքների, մոմիկների, սպեղանիների տեսակները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում քսուքային և մոմիկային հիմքերի դասակարգումը,</p> <p>4) ճիշտ է բնութագրում պատրաստման եղանակները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում արտադրական գործընթացի հիմնական փուլերը:</p>

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվեն թեստային առաջադրանքներ քսուքների, մոմիկների, սպեղանիների բնութագրման և դասակարգման, քսուքային և մոմիկային հիմքերի վերաբերյալ: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա ներկայացնել պատրաստման եղանակները և փուլերը:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • քսուքների, մոմիկների, սպեղանիների տեսակները, • քսուքների, մոմիկների, սպեղանիների պատրաստման եղանակները և փուլերը, • քսուքային և մոմիկային հիմքերի դասակարգումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստային առաջադրանքներին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը « Դ Ե Ղ Ա Գ Ո Ր Ծ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Մ Ե Վ Է Կ Ո Ն Ո Մ Ի Կ Ա »	
Մոդուլի դասիչը	<p>ԴԵՂ-05-19-015</p>
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել դեղագործական կազմակերպությունների գործունեության կազմակերպման կարգի, դեղորայքի՝ որպես առանձնահատուկ ապրանքի, ինչպես նաև այլ դեղագործական ապրանքատեսակների ընդունման, բաց թողման և այլ գործընթացների վերաբերյալ գիտելիքներ և կարողություններ:</p>
Մոդուլի տևողությունը	<p>90 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 36 ժամ գործնական աշխատանք՝ 54 ժամ</p>
Մուտքային պահանջները	<p>Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԴԵՂ-5-19-010 «Ձեռներեցություն», ԴԵՂ-5-19-014 «Դեղերի գործարանային տեխնոլոգիա» մոդուլները:</p>

<p>Ուսումնառության արդյունքները</p>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) բնութագրի դեղագործական գործունեությանը ներկայացվող պահանջները, 2) ներկայացնի և բնութագրի դեղը՝ որպես առանձնահատուկ ապրանք, տարբերակի դեղերի տեսակները և անվանումները, 3) տիրապետի դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների, հարդեղագործական ապրանքների ընդունման կարգին, 4) տիրապետի դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների պահպանման կարգին, 5) տիրապետի բնակչությանը տրամադրվող տեղեկատվա-խորհրդատվական ծառայություններ տրամադրելու կարգին և դեղագոհության պահանջներին, 6) տարբերակի կեղծված դեղերը, 7) կատարի ապրանքա-նյութական արժեքների գույքագրում, 8) տիրապետի հաշվապահական հաշվառման հիմնական հիմունքներին:
<p>Մոդուլի գնահատման կարգը</p>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<p>Ուսումնառության արդյունք 1</p>	<p>Բնութագրել դեղագործական գործունեությանը ներկայացվող պահանջները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ՊԴԳ-ի (Պատշաճ դեղատնային գործունեության) պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում ՊԱԳ-ի (Պատշաճ արտադրական գործունեության) պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում ՊՊԳ-ի (Պատշաճ պահպանման գործունեության) պահանջները, 4) ճիշտ է ներկայացնում ՊՄԳ-ի (Պատշաճ մատակարարման գործունեության) պահանջները, 5) ճիշտ է ներկայացնում Պատշաճ դեղագոհության գործունեության պահանջները:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ուսանողը պետք է կարողանա բնութագրել դեղագործական գործունեության առանձնահատկությունները: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա</p>

	<p>ներկայացնել ՊԴԳ, ՊԱԳ, ՊՊԳ, ՊՄԳ, Պատշաճ դեղագրության գործունեության պահանջները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • դեղագործական գործունեության բնութագիրը, • դեղագործական գործունեությանը ներկայացվող պահանջները: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել և բնութագրել դեղը՝ որպես առանձնահատուկ ապրանք, տարբերակել դեղերի տեսակները և անվանումները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բնութագրում դեղերի հիմնական հատկանիշները (որակ, անվտանգություն, արդյունավետություն, մատչելիություն), դեղերի տնտեսագիտական առանձնահատկությունները, օգտագործման վրա ազդող գործոնները, 2) ճիշտ է ներկայացնում դեղանյութերի ծագման աղբյուրները և նոր դեղի ստեղծման գործընթացը, 3) ճիշտ է տարբերակում նոր (օրիգինալ) և վերարտադրված (ջեներիկ) դեղերը, անվանումները (քիմիական, առևտրային, միջազգային):
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ուսանողը պետք է կարողանա ներկայացնել դեղերի ստեղծումը, հիմնական հատկանիշները և առանձնահատկությունները: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա տարբերակել նոր (օրիգինալ) և վերարտադրված (ջեներիկ) դեղերի անվանումները:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • դեղը՝ որպես առանձնահատուկ ապրանք,

	<ul style="list-style-type: none"> • դեղերի ստեղծումը և անվանումները: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պատասառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, դեղերի տուփեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետել դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների, հարդեղագործական ապրանքների ընդունման կարգին
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մատակարարի ընտրության սկզբունքները և կնքում գնման-վաճառքի պայմանագիր, 2) ճիշտ է վերլուծում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների, հարդեղագործական ապրանքների պահանջարկը և ձևակերպում մատակարարներին ներկայացվող ապրանքատեսակների պատվերները, 3) ճիշտ է ներկայացնում բաշխման ուղիների տեսակները և ՊՄԳ-ի (Պատշաճ մատակարարման գործունեության) պահանջները, 4) ճիշտ է կազմակերպում մատակարարներից դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների, հարդեղագործական ապրանքների ընդունումը՝ փաստաթղթերով (հաշիվ-ապրանքագիր, բեռի անդորրագիր և այլն):
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ուսանողը պետք է կարողանա ներկայացնել մատակարարի ընտրության սկզբունքները, բաշխման ուղիների տեսակները, ՊՄԳ-ի պահանջները: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա կնքել գնման-վաճառքի պայմանագիր, կազմակերպել մատակարարներից դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների, հարդեղագործական

	<p>ապրանքների ընդունումը՝ ըստ փաստաթղթերի:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • մատակարարի ընտրության սկզբունքները, • բաշխման ուղիների տեսակները, ՊՄԳ-ի պահանջները, • դեղանյութերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների, հարդեղագործական ապրանքների ընդունումը: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, դեղերի տուփեր, փաստաթղթերի ձևաթղթեր (բլանկներ):</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Տիրապետել դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների պահպանման կարգին</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ՊՊԳ-ի (Պատշաճ պահպանման գործունեության) պահանջները, 2) ճիշտ է ընտրում դեղերի պահպանման պայմանները, 3) ճիշտ է ընտրում դեղանյութերի պահպանման պայմանները, 4) ճիշտ է ընտրում դեղաբուսական հումքի պահպանման պայմանները, 5) ճիշտ է ընտրում բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների պահպանման պայմանները:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ուսանողը պետք է կարողանա ներկայացնել ՊՊԳ-ի պահանջները: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա կնքել գնման-վաճառքի</p>

	<p>պայմանագիր, կազմակերպել մատակարարներից դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների, հարդեղագործական ապրանքների ընդունումը՝ ըստ փաստաթղթերի:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • ՊՊԳ-ի պահանջները, • դեղանյութերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների, հարդեղագործական ապրանքների պահպանումը: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, դեղերի տուփեր, փաստաթղթերի ձևաթղթեր (բլանկներ):</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 5</p>	<p>Տիրապետել բնակչությանը տրամադրվող տեղեկատվա-խորհրդատվական ծառայություններ տրամադրելու կարգին և դեղագոհության պահանջներին</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է անցկացնում սպառողների հետ խորհրդատվություն՝ դեղատանն առկա դեղերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների մասին, 2) ճիշտ է առաջարկում հիվանդներին բացակայող դեղերի փոխարինողները, 3) ճիշտ է իրազեկում սպառողներին դեղերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների օգտագործման եղանակների մասին, 4) ճիշտ է բացատրում դեղերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների օգտագործման ձևը, տան պայմաններում պահպանման կանոնները, 5) ճիշտ է գրանցում դեղատոմսերը և կազմակերպում դեղերի բաց թողումը, 6) ճիշտ է ներկայացնում Պատշաճ դեղագոհության գործունեության պահանջները, գրանցում և հաղորդում դեղերի

	կողմնակի ազդեցության վերաբերյալ տեղեկությունները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Հարց ու պատասխանի միջոցով ուսանողը պետք է կարողանա ներկայացնել ՊՊԳ-ի պահանջները: Գործնական առաջադրանք կատարելիս ուսանողը պետք է կարողանա կնքել գնման-վաճառքի պայմանագիր, կազմակերպել մատակարարներից դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների, հարդեղագործական ապրանքների ընդունումը՝ ըստ փաստաթղթերի:</p> <p>Ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • ՊՊԳ-ի պահանջները, • դեղանյութերի, դեղաբուսական հումքի, բժշկական նշանակության առարկաների, հարդեղագործական ապրանքների պահպանումը: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և մեթոդական գրականություն, պաստառներ, դիդակտիկ նյութեր, սլայդներ, տեսաֆիլմեր, դեղերի տուփեր, փաստաթղթերի ձևաթղթեր (բլանկներ):
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Տարբերակել կեղծված դեղերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ՀՀ-ում դեղերի շրջանառության կարգավորման օրենսդրական դաշտը (ՀՀ Դեղերի մասին օրենքը, Լիցենզավորման մասին օրենքը և այլն), 2) ճիշտ է տարբերակում կեղծված դեղերի տեսակները, 3) ճիշտ է բնութագրում դեղերի կեղծմանը նպաստող գործոնները, 4) ճիշտ է տիրապետում կեղծված դեղերի հայտնաբերման հմտություններին:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարությունների

